№ 71 ԵՐԵՔՇԱԲԹԻ, 7 ԱՊՐԻԼԻ

1915

ՔԱՌԱՍՈՒՆՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ԵՐԵՔՇԱԲԹԻ, 7 ԱՊՐԻԼԻ № 71

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 ռուբլի. ամսական 85 կոպ.
Առանձին համարները ՍՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Соломоновская ул., № 21.

Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տէլէֆօն № 2—53

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20—10 կոպ.

Տպարանի տէլէֆօն № 67.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՇԱԿ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».

TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ԱՊՐԻԼԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ 8 ՌՈՒԲԼԻ

Բաժանորդագրութիւն ընդունվում է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած։

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամակագրոշմ։

ՀԻՆ ՀԱՍՑԷՆ և 40 կ. նամակագրոշմ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ։

Յայտարարութիւնների համար պիտի վճարել՝ I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպէկ։

Պրեմիաներ «ՄՇԱԿԻ» տարեկան բաժանորդները, օրենք 1915 թ. ընթացքում լրիւ վճարած կունենան 10 ր. բաժանորդավճարը, կը ստանան որպէս պրէմիա հետևեալ նոր լոյս տեսնելիք գրքերը. 1) «Ցանկվածը»—մեծ վէպ Շահրիարի հայկ. յեղափոխ. կեանքից, 2) «Հայկական հարցը»—լուսաբանված դոկումենտներով։

ԱՊՈՒՐԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Ներսիսեան Հայոց Հոգեւոր Դպրոցի Հոգաբարձութիւնը սրանով յայտնում է ի լուր հասարակութեան, որ ապրիլ ամսի 7-ին Սուրբ-Նշան եկեղեցում պատարագից յետոյ կատարվելու է դպրոցիս բարերար հանգուցեալ

ԱԻԵՏԻՔ ՓԻՐՈՅԵԱՆԻ

ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ԿԱՐԳԸ։

(Ե.) 213. 2—2

Վշտաբեկ Մարիամ Յակոբեան և Փափո Կարապետեան Մարտիրոսեանցները խորին կսկիծով յայտնում են ազգականներին և ծանօթներին՝ առաջինը իր անմոռանալի և թանգագին ամուսնու, իսկ երկրորդը իր եղբօր՝

Շարբո Կարապետեան ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ

մահը, որ տեղի ունեցաւ մարտի 30-ին, գիշերվայ ժամը 1-ին։ Յուղարկաւորութիւնը այսօր, երեքշաբթի, ապրիլի 7-ին, առաւօտեան ժամը 10-ին, սեփական տնից (Կախետինսկի փող. № 45) դէպի Վանքի մայր-եկեղեցին։ Թաղումը տեղի կունենայ ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու գաթում։

216. 1—1

Թիֆլիսի Վանքի աւագ եկեղեցու Կրօնապատկան Թանգարանի Մնայուն Վարչութիւնը յայտնում է հայ հասարակութեան, որ այսօր, երեքշաբթի, ապրիլի 7-ին, Աւետաց տօնին Վանքի աւագ եկեղեցում պատարագից յետոյ կատարվելու է ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ՝ Թանգարանի հիմնադիր

ԱԻԵՏԻՍ ԲԱԼԱՅԵԱՆ ՂՈՒԿԱՍԵԱՆՑԻ

գերեզմանի վրա։

215. 1—1

ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷՆ

ցանկանալով կազմակերպել բժշկական սանիտարական խումբ Ալաշկերտի շրջանը վերադարձող զաղթականների համար, խնդրում է համաձայնվող բժիշկներին, ֆելդշերներին և սանիտարներին դիմել կոմիտէին՝ Тифлисъ, Абасъ-Абадская пл. № 7.

առ. (չ. ու.) 211. 3—2

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ հովանաւորութեան ներքոյ գտնվող

ՀԱՅ ՆՊԱՍՏԱՄԱՏՈՅՑ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ,

ընդունած լինելով էջմիածնի համաժողովի որոշումները՝ փախստական-զաղթականներին օգնելու մասին և նրա մշակած գործունէութեան ծրագիրն ամբողջովին, առանց որևէ վերապահումների, շարունակում է ընդունել նուիրատուութիւններ վերոյիշեալ ծրագիրն իրագործելու նպատակով։

Նուէրները կարելի է ուղղել 1) Ընկերութեան նախագահին (Тифлисъ, Хану Сагнакскому). 2) Ընկերութեան գանձապահին (Тифлисъ, Юльѣ Спендіаровой—Евангуловская, 8) և 3) «Մշակի» խմբագրութեան անունով (Редакція газеты «МШАКЪ» для передачи «НПАСТАМАТУЙЦУ»).

առ. (օ. մ.) 197. 5—3

ՊՐՕԳԻՄՆԱԶԻՈՆ Կ. ԼԻՍԻՑԵԱՆԻ

պետական կլասիկական պրոգիմնազիաների դասընթացքով և իրաւունքներով։ Տղաների և աղջիկների միատեղ ուսուցում։

Ընդունելութեան քննութիւնները՝ ապրիլի 16-ին, 17-ին, 18-ին և 20-ին առաւօտեան ժամը 10-ից։ Տեղեկութիւններ կարելի է ստանալ ամեն օր ժամը 11-ից մինչև 2-ը։ Հեռախօս 16—45. Սերգիէվսկայա փողոց սեփ. տուն № 20։

առ. (Ե.) 210. 2—1

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՈՒՆ
(ԶՈՒԲԱԼՕՎԻ ԱՆՈՒԱՆ)

Այսօր, երեքշաբթի, ապրիլի 7-ին

ՀԱՅԿ. ԴՐԱՄ. ԽՄԲԱԿ.

Կը ներկայացնէ

ՕԹԷԼԼՕ

Ողբերգ. 5 գործ. և 7 պատկ. Շէքսպիրի։ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ.—առ. Յամիկ, օր. Վահեցեան, պ. պ. Ամօ-Խարազեան, Ազաբաբեան, Գաւրօշ, Գալստեան, Գուրեան, Մարութեան, Յարութիւնեան II, Ղալանչեան, Սերժ, Օդաբաշեան և ուրիշները։
Սկիզբը երեկ. ճիշդ ժամը 8-ին։
Բեմադրութեան հերթապահ անդամներ՝ Մ. Ստամբոլցեան և Ա. Էմիզբարեան
ԱԶԴ.—Ապրիլի 11-ին կը կայանայ Խմբակցութեան բեմադրութիւնը ԱՄՕ-ԽԱՐԱԶԵԱՆԻ բենեֆիսը՝ ԷԴԻՊ ԱՐԲԱՑ։

„ՄՇԱԿԻ" ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

L. SOLUSOՅԻ հետեւեալ երկերը.
1) ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆԸ, թարգմ. Սուրխաթեանի . . . . . 30 կ.
2) ԿՕՆՖՈՒՑԻՈՍ (Զինական իրատուությունը), խմբագրութեամբ Լ. Ն. Տօստոյի, կազմեց Ա. Բուլանժէ, թարգմ. Սուրխաթեանի . . . . . 7 կ.
3) ԱՍԱՑՈՒԱԾՆԵՐ ՄԱՀՕՄԷԴԻ, ընտրված Լ. Տօլստոյից, թարգ. Լ. Դանիէլեանի . . . . . 5 կ.
4) ՔՈՑՐԵՐԸ, թարգ. Դանիէլեանի . 5 կ.
5) ԻՆՉՈՎ ԵՆ ԿԵՆԴԱՆԻ ՄԱՐԴԻԿ, թարգմ. Լ. Դանիէլեանի . . . 10 կ.
6) ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ, I պրակ, թարգմ. Ա. Մ., 30 կ.
7) ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ, II պրակ, թարգմ. Ա. Մ., 20 կ.
Նրանք, որոնք այս գրքերից մի-մի օրինակը պահանջեն մեզանից փողը կանխիկ ուղարկելով, կը ստանան 10 % զեղչ և ճանապարհածախսը մեզ վրա։ Վերադիր վճարով պահանջողներին զեղչ չի լինի։
Հասցէն՝ Ред. газ. «Мшакъ», Тифлисъ.

Մոսկվայի համալսարանի
ՊՐՕՖԵՍՍՈՐ
Ի. Խ. ԶԻՐՆԷ

ընդունում է վիրաբուժական հիւանդութիւնների համար ամեն օր՝ ժամը 4—5-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից։ Старая Бебутовская ул., № 58, տ. բժ. Մկրտչեանցի։

(Ե. շ.) առ. 208. 3—1

ԿՈՎԿԱՍԸ ԻԲՐԵՒ ԱՐԴԻՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

I

Որքան և պատերազմի օրերում անժամանակ նկատվի խօսել խաղաղ կուլտուրական հարցերի մասին, բայց և այնպէս այն հարցը, որ ներկայումս քննութեան առարկայ է դարձել մամուլի և արդիւնաբերութեան գործերով զբաղվող վարչութիւնների մէջ և առանձին խորհրդակցութեան առարկայ դարձաւ նաև Թիֆլիսում, ապրիլի 4-ին, Թիֆլիսի քաղաքագլխի կողմից հրաւիրված մի ժողովի մէջ,—արժանի է ամենալուրջ ուշադրութեան։

Հարց է ծագել երկրորդ ֆաբրիկային քաղաք, երկրորդ Լօձ հիմնելու մասին, կամ Լօձի ֆաբրիկներն այլ տեղ փոխադրելու մասին։ Ինչպէս յայտնի է, Լօձ քաղաքում, որ այժմ գրաւված է գերմանացիներից, կենտրոնանում է բրդային, բամբակային գործուածքներ պատրաստող, մշակող ֆաբրիկների մեծագոյն մասը։ Այդ գործարաններն են հայթայթում Մոսկվայի գործարանների հետ միասին Ռուսաստանի մեծագոյն մասին, Կովկասին, Անդրկասպեան երկրին, Միջին Ասիային, Հիւսիսային Պարսկաստանին բրդից և բամբակից ապրանքներ, գործուածքներ։ Անկախ այն հանգամանքից, թէ Լօձը գտնվում է այժմ գերմանացիների ձեռքում, երկրորդ Լօձ կամ երկրորդ ֆաբրիկային գործարանների մեծ կենտրոն ստեղծելու հարցը վաղուց քննութեան առարկայ է եղել։ Եւ շատերը գտել են, որ անհրաժեշտ է ստեղծել երկրորդ Լօձ։

Այժմ քննվում է այն հարցը, թէ ուր ստեղծել երկրորդ Լօձը կամ փոխադրել Լօձի ֆաբրիկներն այն դէպքում, եթէ այդտեղի ֆաբրիկատէրերը ցանկութիւն յայտնեն փոխադրել այլուր իրանց գործարանները։

Եւ ահա մի քանի քաղաքներ և շրջաններ՝ Օդեսայի, Եկատերինօսլավի, Զանքեր են գործ դնում և աշխատում ցոյց տալ, որ ամենայարմար կենտրոնատեղին իրանց շրջաններն են։ Սակայն վերջերս լսվեցին ձայներ, որ ամենից շատ յարմարութիւններ ունի Կովկասը։ Եւ ահա երկու քաղաք՝ Բաքուն և Թիֆլիսը՝ նկատվում են իբրև յարմարագոյն վայրեր՝ կենտրոնացնելու ֆաբրիկները։

Այդ հարցի առիթով էր, որ Թիֆլիսի քաղաքագլուխը ապրիլի 4-ին գումարել էր Դումայի դահլիճում մի խորհրդակցութիւն, որին հրաւիրված էին առևտրական, արդիւնաբերական, ֆինանսական շրջանների, մամուլի ներկայացուցիչներ և հասարակական գործիչներ և ուր Թիֆլիսի նահանգի ֆաբրիկային տեսուչը կարդաց իր պատրաստած զեկուցագիրը, որի մէջ ցոյց էր տալիս այն առաւելութիւնները և յարմարութիւնները, որ ունի ընդհանրապէս Կովկասը և մասնաւորապէս Թիֆլիս քաղաքը՝ դառնալու ֆաբրիկային կենտրոնավայր։

Խորհրդակցութեան ժամանակ արտայայտվեց երկու հոսանք և ուղղութիւն, իրար հակադիր. մինը՝ այն կարծիքն էր արտայայտում, թէ այդպիսի մի ծրագիր իրագործելը շատ դժուար է, կարօտ է շատ խոշոր կապիտալների, կը զգացվի բանուորական ոյժերի պակասութիւն և արդէն կատարված փորձերը մատնվել են անաջողութեան։ Երկրորդ հոսանքը նայում էր խնդրի վրա ոչ պեսիմիստօրէն, այլ կարծում էր, որ Կովկասին մեծ ապագայ է սպասում այդ կողմից, որ նա ունի շատ մեծ յարմարութիւններ և առաւելութիւններ և սպասվելիք օգուտները անթիւ կը լինեն։

Ի հարկէ խորհրդակցութիւնը ոչ մի վերջնական եզրակացութեան չը յանգեց և չէր էլ կարող յանգել, քանի որ նա մտքերի մի նախնական փոխանակութիւն էր. բայց նա ցոյց տուեց, որ հարցը արդէն արծարծված է, ուստի և Կովկասն ու նրա գործիչները չեն կարող լռութեամբ անցնել այդ հարցի մօտով և լրջօրէն նկատողութեան չառնել։

Եւ որովհետև Կովկասի առևտրի և արդիւնաբերութեան հարցերի մէջ ոչ պակաս շահագրգռված են և հայերը, որոնց ձեռքումն է գտնվում առևտրի և արդիւնաբերութեան մի մասը, ուստի և հայ մամուլը պէտք է նկատողութեան առնէ այդ հարցը և աշխատէ լուսաբանել զանազան կողմերից։

Հ. Առաքելեան

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

ՊԱՏԵՐԱԶՄ ԹԻՒՐՔԻԱՅԻ ԴԷՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

5 ապրիլի

ԹԻՖԼԻՍ.—Պաշտօնական Կովկասեան զօրաբանակի շտաբի կողմից.

Ծովամերձ ուղղութեամբ ապրիլի 3-ին շարունակվեց հրացանաձգութիւն։

Մնացած ուղղութեամբ փոփոխութիւն չը կայ։

ԱՆԳԼՕ-ԹԻՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

4 ապրիլի

ԼՕՆԴՕՆ.—Հնդկաստանի զօրքերի ստատսեկրէտարը հաղորդում է Պարսից ծոցում տեղի ունեցած ճակատամարտի մասին։

Վանելով թշնամուն մարտի 31-ին, Շաթըլ հիւսիսային և արևմտեան կողմերից, մեր զօրքերը ապրիլի 1-ին առաւօտը շարունակեցին արշաւել Զօբէյրի ուղղութեամբ, և առ. ժամը 11-ի մօտ թիւրքերը վանվեցին իրանց առաջակայ դիրքից, որ գտնվում էր մեր բանակից $2^1/_2$ մղոն հեռու դէպի հարաւ-արևելք։

Յետոյ մեր զօրքերը յարձակում գործեցին թշնամու գլխաւոր ոյժերի վրա. Բիրջիսիէի անտառի մօտ թշնամին, թւով յամենայն դէպս 15,000 մարդուց ոչ պակաս, 6 թնդանօթով, դրաւում էր մի քանի առաջնակարգ դիրքեր, որտեղից և հնարաւորութիւն ունէր կրակել արշաւող զօրքերի դէմ։ Այնու ամենայնիւ մեր զօրքերը սկսեցին արշաւել, և թշնամին յամառ դիմադրութիւնից յետոյ վանվեց իր խրամատներից սուլինային կուռվ։

Յերեկվայ ժամը 4 ու 30 ր. ամբողջ դիրքը վերջնականապէս գրաւեցին անգլիացիք։

ՌՈՒՍ-ԹԻՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

5 ապրիլի

ԹԻՖԼԻՍ.—Պաշտօնական Կովկասեան զօրաբանակի շտաբի կողմից.

Մեր կողմից կօրուստների ընդհանուր թիւն է 700 մարդ։

Թիւրքերը նահանջեցին դէպի Նախաթլիա, Զօբէյրից 19 մղոն դէպի հիւսիս-արևմուտք։

ԴԱՐԴԱՆԵԼԻ ՈՄԲԱԿՈԾՈՒԹԻՒՆԸ

(Պետ. Հեռ. Գործ.)

5 ապրիլի

ԼՕՆԴՕՆ.— Մամուլի բերբոն յայտնում է, որ անգլիական ստորջրեայ «E. 15» ռազմանաւը, դժուարին հետախուզում կատարելիս Դարդանէլում, կեցէ հրուանդանի մօտ խրվեց աւազի մէջ։ Համաձայն թիւրքաց պաշտօնական հաղորդագրութեան, ստորջրեայ նաւի նաւատերերն և օֆիցէրները ազատվել են, բայց գերի են ընկել։

ԹԻՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

(Պետ. Հեռ. Գործ.)

4 ապրիլի

ՊԱՐԻԶ.—Երեկ ֆրանսիական մի զրահանաւ աջողութեամբ ռմբակոծեց Էլ Արիշ ամրութիւնները՝ Սուէցի ջրանցքից դէպի արևելք, և քաղաքի շուրջ կենտրոնացած թիւրքերի խառնիճաղանճ խումբը։

ՍՕՖԻԻՆ.—Մալտա կղզուց և Ալէքսանդրիայից տեղեկացնում են, որ այնտեղից Դարդանէլ են ուղարկված մեծ թւով շոգենաւեր զօրքերով։

ԼՕՆԴՕՆ.— Ծովակալութիւնը հաղորդում է. «Մանիտու» շոգենաւը, որի վրա գտնվում էին զօրքեր, ենթարկվեց յարձակման Սգէյեան ծովում թիւրքաց մի ականաւորից։ Անգլիական «Մինէրվա» յածանաւը հակառականաւերով սկսեց հետապնդել հեռացող ականանաւին, որ հարկադրված նեռվեց ափը և ջախջախվեց Քիոս կղզու մօտ։ Ականանաւի նաւատերերը գերվեցին։ Հաղորդում են, որ շոգենաւի վրա եղած մարդկանցից 100 հոգին խեղդվել են։ Մանրամասնութիւններ չը կան։

(Լրագիրներից)

✦ «Б. В.»-ին հեռագրում են Դէդէ-Աղաչից, որ դաշնակիցների երկու ռազմանաւ աջողութեամբ ռմբակոծեցին Դարդանէլի № 8 բերդը։ Երեք այլ ռազմանաւ խիստ վնասեցին Համիդիէ բերդը։

✦ Կ. Պոլսում ահագին ապառօրութիւն է գործել այն տեղեկութիւնը, որ Անգլիայի և Ռուսաստանի մահմէդական ազգաբնակութիւնը շարունակում է մնալ լոյալ։ Մեկայլ մեծ շերեփը Անատոլիայի բարձր մահմէդականները հարցին պատասխանել է, որ երբեակ համաձայնութեան պատութիւնները իսլամի թշնամիներ չեն։

✦ Դաշնակիցների աէրօպլանները երեւացել են Կ. Պոլսի վրա և ահ ու սարսափ են ձգել ազգաբնակութեան վրա։

✦ Կ. Պոլսը բուլգարական միսսիան կըտրուկ կերպով յայտնել է Բ. Դրան, որ Բուլգարիան հապէս չի գայ յօգուտ Թիւրքիայի։

✦ Թիւրքիան, խոստանալով Բուլգարիային Թրակիայի մի մասը, համոզում է պահպանել բարեացակամ չեզոքութիւն և թոյլ տալ անց կացնել ապրանքներ։

✦ Անգլիական յածանաւերը ռմբակոծել են Թիւրքաց բանակը Էնոսի մօտ։

ԴԱՐԶԵԱԼ Կ. ՊՕԼՍԻ ԲԱԺԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

«Рус. Вѣд.»-ում Ս. Կոտլարեվսկի խօսելով Կ. Պոլսը ապագայ վիճակի մասին և կապ առնելով այդ քաղաքը և նեղուցները բաժանելու համար զանազան ժամանակ կազմված ծրագիրների վրա՝ ասում է, որ Կ. Պոլիսը իր նեղուցներով անպայման պէտք է տրվի Ռուսաստանին՝ շատ նկատումներով։

«Առաջին հայեացքին կարող է թւալ,—ասում է նա,—որ Կ. Պոլիսը Ռուսաստանի կողմից գրաւելը անխուսափելի չէ պէտք է համարվի։ Կ. Պոլսում շատ բան կայ, որ դիւթում է մեզ, շատ բան, որ հա է պահում։ Զարմանալի հնակայական և պատասխանատու կը լինէին դրան ձեռք բերելու հետևանքները։ Սակայն մենք արդէն չենք կարող կանգ առնել այդ կասկածների առաջ։ Ռուսաստանի համար թոյլատրելի չէ, որ Կ. Պոլիսը անցնի ուրիշ պետութեան ձեռքը, ինչպէս օրինակ Յունաստանի կամ Բուլգարիայի, իսկ նրան ազատ քաղաք դարձնելով էլ բազմատեսակ ժողովուրդներով ու ցեղերով՝ քիչ դժուարութիւններ չի ստեղծի անդամ հասարակ կարգապահութեան մտքով։

«Թիւրք-իտալական պատերազմի ժամանակ «Indépendence Belge»-ում անդամ երևաց Կ. Պոլիսը և նրա շրջակայքը երրորդական պետութիւնների միջև բաժանելու ծրագիր, որով Ռուսաստանը պէտք է ստանար Բոսֆորի ափերը, Գերմանիան՝ Սկիւ-

տաքը, Ֆրանսիան՝ Պերան, Աւստրօ-Ունգարիան՝ Ղալաթիան և Անգլիան՝ Սատիրոլը։ Այս ծրագիրը բղխում էր այն մտքից, որ Կ. Պոլսից անհարիւն կը լինի կազմել ազատ քաղաք։ Արտաքին կերպով նման ազատ քաղաքը փաստապէս պէտք է լինի որեւէ գերակշռող ազդեցութեան ներքոյ, շատ հաւանական է՝ յունական. չէ որ հէնց հիմա էլ յոյները չեն թաղցնում իրանց ցանկութիւնները այդ մասին։ Իսկ ռուսական հովանաւորութիւնը էապէս կապված է շատ դժուարութիւնների հետ, քան Կ. Պոլսի միացումը։ Այս վերջինները չը պէտք է փոքրացվեն։ Չէ կարելի տիրել Կ. Պոլիսը, առանց համապատասխան «խիտերլանդին» տիրելու, որը կարող է որոշվել Էնոս-Միդիա սահմանով, որը ենթադրվում էր Բոլգարիայի համար բալկանեան առաջին պատերազմից յետոյ... Նման խիտերլանդը անխուսափելի է և նեղուցներում հաստատվելու համար։ Փոքր-ասիական ափին վաղաժամ կը լիներ ցոյց տալ խիտերլանդի խոկական սահմաններ, որ անհրաժեշտ են նեղուցները պաշտպանելու համար»։

Այնուհետև Ս. Կոալեարեվսկի խօսում է «մի շարք դժուարին և պատասխանատու խնդիրների մասին»։ Նրա համար այդ «խնդիրներից» մէկն է և եկեղեցական հարցը, որ կապված է լինելու Կ. Պոլսում պարիարք ունենալու հետ։ Եւ նրա կարծիքով՝ այդ հարցը հաւիւ լուծվի, առանց էական փոփոխութիւն մտցնելու եկեղեցական կազմի և պարիարքութեան բնոյթի մէջ։ Ու նա աւելացնում է, որ «Ռուսաստանը պէտք է ձգտի Կ. Պոլսի պատրիարքութեանը դարձնել խկապէս տիեզերական, այլ ոչ յունական...»։

Յօդուածի վերջում Կոալեարեվսկի ասում է. «Զը պէտք է մոռանալ, որ նեղուցները և Կ. Պոլիսը Ռուսաստանի համար ունեն միանգամայն բացառիկ նշանակութիւն, քան ուրիշ որևէ պետութեան համար»։

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

—o—

ԹԱԳԱՒՈՐ ԿԱՅՍՐԻ ՄԵԿՆՈՒՄԸ

—

(Պետ. Հեռ. Գործ.)

4 ապրիլի

ՊԵՏՐՈԳՐԱԴ.— (Պաշտօնական) Նորին Կայսերական Մեծութիւն Թագաւոր Կայսրը այսօր բարեհաճեց մեկնել Ցարսկոյէ Սելօյից դէպի գործող բանակը։

Ստորագրեց Կայսերական Պալատի մինիստր գեներալ-ադիւտանտ կոմս Ֆրեդէրիկս։

ԹԱԳԱՒՈՐ ԿԱՅՍՐԸ ԳՈՐԾՈՂ ԲԱՆԱԿՈՒՄ

—

(Պետ. Հեռ. Գործ.)

5 ապրիլի

ՊԵՏՐՈԳՐԱԴ.— Կայսերական Պալատի մինիստրի հեռագիրը։

Նորին Մեծութիւն Թագաւոր Կայսրը այսօր բարեհաճեց ժամանել գործող բանակը։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԷՄԻԼ ԶՕԼԱ

(Ծննդեան 75-ամեակի առիթով)

—

«А онъ, мятежный, просилъ бури,
Какъ будто въ бураxъ есть покой!»

Այս քանի օրս լրացաւ Էմիլ Զոլայի ծննդեան 75-ամեակը։ Նա ծնվել է 1840 թ., վախճանվել 1902 թ., այն է՝ 62 տարեկան հասակում։

Իր 40-ամեայ գրական գործունէութեան ընթացքում Էմիլ Զոլան թողեց ֆրանսիական և նոյնիսկ համաշխարհային գրականութեան ամենանոյակապ շէնքերից, հսկայական յիշատակարաններից մէկը։ Նա թողեց 40 հատորներից բաղկացած մի ժառանգութիւն։

Էմիլ Զոլան ստեղծեց վիպասանութեան մէջ մի ամբողջ ուղղութիւն, մի շկոլա իր հետևորդներով. նա հիմք դրեց ֆրանսիական նատուրալիզմին, հասցրեց նատուրալիզմը ծայրայեղ ասպիճանների, կենտրոնացրեց իր վրա ամբողջ քաղաքակիրթ մարդկութեան ուշադրութիւնը թէ որպէս վիպասան և թէ որպէս հասարակական գործիչ։ Նա դարձաւ թէ բուռն ատելութեան և թէ ոգևորված երկրպագութեան առարկայ. ենթարկվեց սոսկալի հալածանքների թէ գրական և թէ հասարակական կեանքի առաջքում։

Էմիլ Զոլայի փայլուն, ուժեղ անհատականութիւնը, երկաթէ կամքը, միացած մեծ գեղարուեստական տաղանդի և մարդասիրական բնաւորութեան հետ, անյաղթելի էին դարձնում նրան դաղափարային կուսակցութեան։ Մի արտակարգ տոկունութեամբ գնում է նա հասարակական կարծիքի դէմ, ոտնատակ է տալիս ընդունված հասկացողութիւնները և ամուր դիրք հաստատում իր իդէաների շրջանում։ Եւ քանի աւելի ուժեղ դիմադրութեան է հանդիպում նա իր գործունէութեան ընթացքում, այնքան աւելի տոկուն, աւելի հաստատ քայլերով է առաջ տանում իր բռնած ուղղութիւնը։ քննադատութեան անողոք յարձակումները և միջավայրի, ամբոխի կատաղի հալածանքները միայն կրկնապատկում էին նրա եռանդը։ Երբէք չը՝ կռվեց, երբէք կոմպրոմիսի չը դիմեց Էմիլ Զոլան, երբէք իր «հոը» չը խոնարհեցրեց ոյժի առաջ։

Հասկանալու համար այդ ուժեղ մարդու բարդ բնաւորութիւնը՝ հարկաւոր է հետևել նրա գրական կեանքի պատմութեան զարգացմանը, հարկաւոր է տեսնել և նրա կատարած դերը հասարակական ասպարէզում։

Էմիլ Զոլան ծնվել է Պարիզում. նրա հայրը իտալացի էր, մայրը ֆրանսիացի։

Սկզբնական կրթութիւնը Էմիլ Զոլան ստանում է գաւառական գիմնազիայում. 17 տարեկան հասակում նորից տեղափոխվում է Պարիզ, մտնում է Պարիզի լիցէյներից մէկը, բայց նրան չէ աջողվում վերջացնել ուսումը, հասունութեան վկայական ստանալ. փայլուն կերպով տալով բոլոր քննութիւնները գիտական առարկաներից, նա, որ ապագայում պէտք է դառնար գրականութեան խոշոր ներկայացուցիչներից մէկը, մի ցաւալի թիւրիմացութեամբ, կտրվում է գրականութիւնից։

Առանց վկայական, նիւթական միջոցներից զուրկ, 20 տարեկան պատանին ստիպված է լինում մոր ապրուստը թեթևացնելու համար օրէք աշխատանք որոնել։ Սկզբից նրա ծանր ֆիզիքական աշխատանքը վարձատրվում է ամսէնը միայն 60 ֆրանկով. մի քանի ամսից յետոյ նա ստանում է գործակատարի պաշտօն մի գրավաճառանոցում, ամսէնը 100 ֆր. վարձատրութեամբ, ուր նրա պարտականութիւնները սահմանափակվում են ամբողջ օրը գրքեր փաթաթելով։ Ցերեկը նա աշխատում է գրավաճառանոցում, իսկ գիշերվայ ազատ ժամերին նուիրվում է իր սիրած գրականութեանը։

Սկզբից գրում է փոքրիկ պատմուածքներ բոմանտիկ-սանտիմենտալ ուղղութեամբ. հետզհետէ այդ ուղղութիւնը փոխվում է, բոմանտիզմը խպառ անհետանում, տեղի է տալիս ըէալ կեանքի նկարագրութեան։

1864 թ. լոյս է տեսնում նրա պատմուածքների առաջին հատորը, որ ուշադրութեան չէ արժանանում ոչ քննադատութեան և ոչ հասարակութեան կողմից։ Այդ ժամանակներում Զոլան ստանում է աւելի լաւ պաշտօն, որ հնարաւորութիւն է տալիս նրան աւելի ժամանակ նուիրել գրականութեանը։

1865 թ. լոյս է տեսնում նրա առաջին բոմանը, որ սկիզբն է դնում նրա նատուրալիստական ուղղութեանը։ Մինչդեռ ժամանակ նա սկսում է քննադատական յօդուածներ զետեղել «L'Événement» և «Le Figaro» թերթերում։ Այդ յօդուածներում արդէն ընորոշվում է նրա անկախ, ինքնուրոյն, մարտնչող բնաւորութիւնը. այդ յօդուածները, որ տրամադրվէն հակառակ են ընդունված հասարակական հայեացքներին, դարձնում են իրանց վրա հասարակութեան ուշադրութիւնը և ստեղծում հակառակորդների մի բանակ։ Միևնոյն ժամանակ միևնոյն հեռից լոյս տեսնող նրա բոմանները, ուր նա կանգ է առնում կեանքի մութ, կոպիտ, բիրտ ու ինքիմ կողմերի վրա, կատարեալ զայրոյթ են առաջ բերում։ Իր բազմաթիւ բոմաններում նա պատկերացնում է կեանքը իր բոլոր այլանդակութեամբ. նատուրալիզմը հասցնում է ծայրաստիճանների, մարդկային ստոր բնազդները այդ բոմաններում երևան են գալիս իրանց զարհուրելի մերկութեամբ։ Մի զարմանալի մանրամասնութեամբ Զոլան կանգ է առնում «տեմպերամենտի» ամենաստոր կալի, ամենակեղտոտ կողմերի վրա։

Մինչև այդ՝ հասարակութեան լայն խաւերին անյայտ Զոլան իր այդ գրուածքներով դարձնում է իր վրա ընդհանուրի ուշադրութիւնը. հասարակութեան զայրոյթը, քննադատութեան յարձակումները ստիպում են նրան աճում են։ Զոլան արտաքսվում է «L'Événement» և «Le Figaro» թերթերից. ֆրանսիական մամուլի դռները փակվում են նրա առաջ. Զոլան ստիպված է լինում իր քննադատական և միւս յօդուածների համար ապաստան որոնել ռուսաց պարբերական մամուլում։ 1875 թ. մինչև 1880 թ. «Вѣстн. Европ.» ամսագրում լոյս են տեսնում նրա պարիզեան նամակները։

Զոլայի գրուածքները տարածվում են լայն չափերով. զուգընթացաբար աճում է և նրա նիւթական ապահովութիւնը. բայց այդ ապահովութիւնը նրան չէ բաւարարում. Զոլան ուզում է հարստանալ և այդ նպատակով ձեռնարկում է գրուածքների մի ամբողջ սերիայի հրատարակութեան, նախօրօք պայմանաւորվելով մի խոշոր հրատարակչական ֆիրմայի հետ։

Մի զարմանալի բեղմնաւորութեամբ երևան են գալիս միմեանց հետևից նրա յայտնի Բուգոն-Մակարեան էպոպէայի բոմանները։ Իր այդ մի շարք բոմաններում Զոլան տալիս է մի ամբողջ տոհմի բնական-ֆիզիոլոգիական և սոցիալական կեանքի պատմութիւնը։ Այդ նպատակով, մի զարմանալի տոկունութեամբ նա ուսումնասիրում է բնական գիտութիւնները և իր այդ՝ միմեանց յաջորդող բոմաններում ցոյց է տալիս, թէ ինչպէս ժառանգաբար մի սերունդից միւսին են անցնում տարբեր վարիացիաներով, միջավայրին համաձայն, տոհմային թէ ֆիզիկական-ֆիզիոլոգիական և թէ հոգեկան-հոգեբանական այլանդակ առանձնայատկութիւնները։ Քանի հատորներում, յաջորդաբար, Զոլան տալիս է հատարակութեան բոլոր խաւերի—թէ երկրագործ ու բանւոր դասակարգի և թէ միջին ու բարձր բուրժուազիայի—ժառանգական այլանդակութիւնների պատկերը։

Եւ մի զարմանալի յամառութեամբ նա տալիս է ժառանգականութեան միմիայն բիրտ, վայրենի, անասնական բնազդների ստոր և կեղտոտ տեսարաններ։ Բարոյական էլեմենտը բացակայում է նրա բոլոր գրուածքներում. ստացվում է այնպիսի տպաւորութիւն, որ կարծես մարդիկ ժառանգում են միմիայն վատ, յանցաւոր, նեժողով, որ նպատակ ունի ժողովել երկաթ, բրոնզ, պղինձ, ցինկ, արճիճ և ալումինիոն, որոնք անհրաժեշտ են ռուսը պատերազմելու համար։

Առաջնորդող յօդուածում «Ջիորնալէ դ'Իտալիան» ասում է, թէ Իտալիան հաստատ վճռել է պաշտպանել իր շահերը Ադրիատիկ ծովում։

ԱԹԷՆՔ.—Ստոյգ աղբիւրից տեղեկացնում են, որ հրոսակախմբեր կազմակերպելը արգասիք է Բոլգարիայում եղած աւստրօ-գերմանական պրօպագանդայի, որին հանդուրժում է Սոֆիայի կառավարութիւնը։ Այդ հրոսակախմբերի կազմի մէջ մտնում էին աւստրիացի օֆիցէրները և պէտք է մասնակցէին Սերբիայի վրա նախագծված աւստրիական յարձակմանը։ Երբ Սերբիա ներս խուժելու միտքը ստիպված թողնվեց, հրոսակախմբերը ֆօն-դէր Գոլց-փաշայի ծրագրով հրաման ստացան խզել Սերբիայի կապը Սօլունի հետ, որտեղից սերբերը ստանում են պաշար։ Յունաց կառավարութիւնը ներկայումս երկիւղ է կրում, որ Սօլունը կարող է մեկուսանալ, հէնց որ հրոսակախմբերը գրաւեն Գէվգէլի-Դէյրան գիծը։ Գերմանիան յոյս ունի, որ դրանով նրան կաջողվի վարկաբեկել Բոլգարիան, որն այն ժամանակ անկարող կը լինի մասնակցել երրակ համաձայնութեան մէջ։

ՍՕԼՈՒՆ.—Սերբիայից եկողները պատմում են, որ երկրի դրութիւնը բարելաւվում է։ Զորքի մէջ տիֆը սկսել է թուլանալ շնորհիւ դաշնակից և չեզոք երկիրներից եկած բժշկական մարմինների ձեռք առած միջոցների։ Բայց և այնպէս սերբերին անհրաժեշտ է մեծ օգնութիւն՝ ազգարնակութեան մէջ տարածված զանազան վարակիչ հիւանդութիւնների դէմ։

Այսօր Նիշ մեկնեցին անգլիական կարմիր խաչի բժիշկները, գթութեան քոյրերը և սանիտարները։

ԱԹԷՆՔ.—Պրինց Գէորգը Բրինդիզիի վրայով մեկնեց Պարիզ։

ԼՕՆԴՕՆ.—Ունիօնիստների կուսակցութեան միտինգում՝ Բիրմինգէմում՝ Չեմբէրլէնը առաջարկեց մի բանաձև, որ հաւանութիւն է տալիս ունիօնիստների պարլամենտական գործելակերպին կառավարութեանը ազգային վտանգի ներկայ ըսկէին աջակցելու մտքով, և հաստատ է արտայայտում, թէ պատերազմը եռանդով կը շարունակվի, մինչ էլ որ արժանայ, մինչև որ Մեծ-Բրիտանիայի և նրա դաշնակիցների լիակատար յաղթութիւնը դէպ խաղաղութեան ամուր հիմքը ելրօպայում։ Անգլիան պէտք է իր նպաստաւոր վախճանին հասցնէ պատերազմը, որովհետև այլ նա կը դադարէ մեծ պետութիւն կոչվել։

ՍՏՕԿՀՕԼՄ.— Բուդապէշտից հաղորդում են, որ սոցիալիստական կուսակցութիւնը նկատի առնելով պատերազմը, վճռել է կայացնել մայիսեան ցոյցեր։

ՀՌՈՄ.—Երէկ Սալանդրան այցելեց տաքին գործերի մինիստրութիւն։ Սոնյի հետ երկար խօսակցելուց յետոյ, վերադարձաւ ներքին գործերի մինիստրութիւն և խորհրդակցեց ֆինանսների նիստերի հետ։

Վիէննայից տեղեկացնում են, որ ամենաշաբաթ կատարվում է մտքերի փոխանակութիւն կայսրի և աւստրօ-ունգարական ռազմարութեան անդամների հետ։

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԾՈՒՐԸ

—

✦ Ֆլանդրիա են մեկնելու զօրագիտակներ համար Գուանկարէն, Գէորգ թագաւորը Կիտչենէրը։

✦ «Веч. Вр.»-ի տեղեկութիւնների համաձայն, Ռուսաստանում գտնվում են հազար գերի, որոնցից 10 հազարը գերմանացիներ են։ Ֆրանսիայում և Բելգիայում գերվել են 251 հազար գերմանացի. Անգլիայում գտնվում են 80 հազար պատերազմական գերի գերմանացի. սերբերը գրաւել են 53 հազար աւստրիացի. եռամսեայ ընթացքում վերցրին 7 հազար գերմանացի. Աֆրիկայում և Սուէզում գրաւել են 5200 թիւրք և գերմանացի. ծովային գործողութիւնները դուրս կիցներին տուին 4980 գերի։ Դաշնակցողների զօրքերի և նաւատորմների վերցրած գերիների ընդհանուր թիւը հաւասարվում է համարեա 1,200,000-ի, այսինքն թիւով լիսս կեսարի 6 զօրաբանակ և Ալէքսանդր Մակեդոնացու 8 զօրաբանակ։

✦ Գերմանացիք մեծ թիւով հեծելազօրք են տեղափոխում Բելգիայից դէպ Կարպատները։

✦ Հռոմում կալուածատէր Ցուբրիին տուգանվել է մէկ միլիոն ռուբլով՝ գաղտնի գործունէութեան համար։

✦ Անգլիական «Իվնինգ-Նիուս» անգլերէն գործարաններում շարունակվող հրդեհները վերագրում է Անգլիայում բնակվող 50,000 գերմանացիներին, որոնց դեռ առանձնացրել։

✦ Ունգարական կառավարութիւնը զեկուցել է Վիէննա, որ եթէ ռուսները խուժեն Ունգարիա, նա կը կարողանայ պատասխանատուութիւն Ռուսաստանի հետ։

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲՈՐՍԱՅԻՆ ԱՌԵՒՏՐԻ ՈՒ ԳԻՒՂԱՏՆՏԵՍՈՒԹԵԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ

—

(Պետ. Հեռ. Գործ.)

5 ապրիլի

ՊԵՏՐՈԳՐԱԴ. — Պետրոգրադի ֆոնդային բորսայի շենութեան մէջ, Պետական Խորհրդի անդամ Տիմիրեազեվի նախագահութեամբ բացվեց բորսային առևտրի ու գիւղատնտեսութեան ներկայացուցիչների համառուսական արտակարգ համագումարը։

Բացմանը ներկայ էին առևտրի ու գիւղատնտեսութեան մինիստրութեան կուսակցի, բոլոր մինիստրների, բորսային կոմիտէների, գիւղատնտեսական ու ուտարարդիւնաբերական ընկերութիւնների կազմակերպութիւնների ներկայացուցիչները։

Համագումարը խնդրեց առևտրի ու գիւղատնտեսութեան մինիստրութեան կառավարչին առ ոտս Թագաւոր Կայսրի կանչել համագումարի անդամների հաւատարիմ հպատակութեան զգացմունքները։

հաւատարմութեան հեռագիր ուղարկել։

զօլոգիական ինստիտուտները... նրա ներում իշխում է մարդ-գազանը իր կալի մերկութեամբ։

Եւ մինչ հասարակութեան մի մասը գեղարուեստի ծափահարում է նրա մակացնող, հասարակական կեղտոտ բնազդներ հանող, յաջորդաբար լոյս տեսնող «Սրիկաների արջ» (L'Assommoir), «Նանա», «Կճուճը» (Pot-Bouille), «Հողը», «Մարդ-գազանը», «Փողը» և միւս այդ տիպի բոմանները, հասարակութեան ամենամեծամասնութիւնը կատաղում է մղում նրա «անբարոյական» գրուածքների դէմ։

Ծայր ասպիճանների հասցրած նատուրալիզմը, «զոլայիզմը» հալածվում է ասելի կերպով. և չը նայած դրան, Զոլայի մանները տարածվում են հարիւր հազարներով օրինակներով. Զոլայի անունը որպէս վիպասանի հանում է իր գագաթնակետին. նրա նիւթական հարստութիւնը նում է օրէ-ցօր։ Զոլան շրջապատում է իրան բուրժուա դասակարգին յատուկ հարթամ շքեղութեամբ։

80-ական թուականների վերջում նատուրալիզմը սկսում է թուլանալ. 1890 թ. կանոնների սկզբում, գրեթէ 1/4 դարի ընթացքում վերջացնելով Բուգոն-Մակարեանների պատմութիւնը, Զոլան սկսում է պերի մի նոր սերիա «երեք քաղաքներ» «Լուրդ», «Հռոմ» և «Պարիզ» պատմութիւնը։ Այդ բոմաններում նա աշխատում է գտնել երկու խոշոր գործոնների—ուսի և գիտութեան, կրօնի և պոզիտիվիզմի ընդհարման միջև։

1890 թուականների վերջում Զոլան նատուր է լինում քաղաքական-հասարակական գործունէութեան։ և երբ երևան գալիս Դրէյֆուսի յայտնի գործը, Զոլան թողնում է գեղարուեստի ասպարէզը և իրան յատուկ կրակով նետվում հասարակական կուռ դաշտի պաշտպանութիւն խնդրած իրաւունքի և ճշմարտութեան։

Դրէյֆուսը ֆրանսիական բանակի

բագոյն Զօրահրամանատարին։

Համագումարը ստացել է ողջոյններ ֆինանսների, ճանապարհների հաղորդակցութեան, արտաքին գործերի, ժողովրդական լուսաւորութեան մինիստրներից, Պետական Խորհրդի նախագահից և բազմաթիւ հեռագիրներ Ռուսաստանի բոլոր կողմերի զիւղատնտեսական ու առևտրա-արդիւնաբերական կազմակերպութիւններից։

Պատգամաւորների թիւը 200-ից անցնում է։ Համագումարը բաժանվեց հացի առևտրի, երկաթուղային, առևտրա-արդիւնաբերական ու ընդհանուր սեկցիաների։

Համագումարը բանալուց յետոյ, առևտրի ու արդիւնաբերութեան մինիստրութեան կառավարիչ իշխան Շախովսկին ճառ արտասանեց, որի մէջ մատնանշեց, թէ մեր ապրած վիթխարի դէպքերը անհրաժեշտ ապացուցեցին, որ պատերազմի և երկրի անտեսական կեանքի մէջ գոյութիւն ունի անպէտք շաղկապ։ Իր ճառի վերջում իշխան Շախովսկին յայտնեց, որ իր պարտականութիւնն է համարում առանձին ուշադրութեամբ լսել հասարակական կազմակերպութիւնների և փոքրաքանակ գործիչների ձայնը և ամեն միջոց ձեռք կառնէ համակերպելու առևտրի ու արդիւնաբերութեան մինիստրութեան գործունէութիւնը հասարակական կազմակերպութիւնների և առևտրա-արդիւնաբերական դասակարգի հայեացքների հետ։

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետ. Հեռ. Գործ.)

4—5 ապրիլի

ԱՐԽԱՆԳԵԼՍԿ.—Լոմոնոսովի մահվան 150-ամեակի առիթով հոգեհանգիստ կատարվեց մայր տաճարում։ Տեղի ունեցաւ հանդիսաւոր ծանակատարութիւն Լոմոնոսովեան աղայոց գիմնազիայում։

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Մինիստրների խորհուրդը որոշեց յատկացնել քաղաքների համառուսական միութեանը 3.925.000 ր.՝ միութեան հաստատութիւնների պահպանութեան համար։

150,000 ր. յատկացրեց տալու իբրև նպաստ այն ստիկաններին և ժանդարմներին, որոնք կը տուժեն չարագործների դէմ իրանց պարտականութիւնները կատարելիս, և 250,000 ր. ստիկանութիւնը ուժեղացնելու ծախքերի համար Վարշավայի գեներալ-նահանգապետութեան նահանգներում պատերազմի պատճառով։

Մինիստրների խորհուրդը որոշեց իրաւունք տալ կանանց, որոնք կաւարտեն Կիէվի և Պետրօգրադի պոլիտեխնիքական ինստիտուտները, ստանալ դիպլոմներ ինժենէրների, ագրոնոմների, բնական գիտութիւնների թեկնածուների կոչումով, գրաւել պետական ծառայութեան մի քանի պաշտօններ, որոնց համար պահանջվում է գիւղատնտեսական կրթութիւն։

Բանտային գլխաւոր վարչութեան վիճակագրական բաժանմունքի տուեալների համաձայն, պետութեան բանտերում առ. 1 փետրվարի գտնվում էին բոլոր կատէգորիաների բանտարկեալներ աւելի քան 171,000։ Առ 1 փ. 1913 թ. բանտերում կային 197,000 հոգի, որպիսի թիւը հետաւարար երկու տարվայ ընթացքում պակասեց 26,000 մարդով։

ՊԱՐԻԶ.— Համաձայն պաշտօնական հաղորդագրութեան, Մադագասկարի հիւսիսարևելեան մասում, Սամբաա շրջանում մրրիկ է։ Շատ շինութիւններ վնասվել են և կործանվել են մի քանի տեղական գիւղեր։

ՕՐԼԻԱՆ.— Վաճառվեց գլխաւոր զինուորական դատարանի նախկին նախագահ գեներալ Տրէմոն։

ԼԷՅԳ.— Լոյս կիրակի գիշեր յանկարծամահ եղաւ յայտնի հասարակական գործիչ Ալէքսանդր Ստախովիչը։

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Մինիստրների խորհուրդը որոշեց յատկացնել Սուրբ Սինոդի տարեկան գումարներ Թիֆլիսի Նահանգական կոմիտէի, Կ. Հ. Բ. Ընկ. և Հայ Գիւղատնտ. ու Տնայնագործական Ընկ. և ծխատէր հոգևորականութեան ու հոգաբարձութեան մասնաժողովի նախագահները, որոնցից ներկայ եղան Գիւղատնտեսական և ծխ. հոգևոր. ու հոգաբարձ. մաս. ներկայացուցիչները։

Կ. Հ. Բ. Ընկ. և Կենտ. Կոմիտէի նախագահ Ս. Ցարութիւնեան մի գրութեամբ յայտնեց, թէ այդ օրը նա փոխադարձ վարկի ընկերութեան անդամների ընդհանուր ժողովի պատճառով անկարող է ներկայ գտնվել, բայց խնդրել է խորհրդի փոխնախագահ բժ. Աղասեանին գալ, որ սակայն ներկայ չը գտնվեց։

Ցիշեալ հաստատութիւնների ներկայացուցիչներին Նպ. Ընկ. վարչութիւնը հրաւիրել էր խորհրդակցելու այն երկու պատգամաւորի ընտրութեան հարցի առիթով, որոնք համաձայն Ամենայն Հայոց Կաթողիկոսի կոնդակի, որ ի..., պէտք է մասնակցեն Էջմիածնում Եղբայրական Օգնութեան Կենտրոնական Ցանձնաժողովի գործունէութեանը Թիֆլիսի եղբայրական օգնութեան հինգ մարմինների կողմից։

Մտքերի փոխանակութիւնը պարզեց, որ Թիֆլիսի հինգ հաստատութիւններին գումարելու նախաձեռնութիւնը մատնանշված չէ կոնդակի մէջ, մինչդեռ ցանկալի է, որ այդ գործը յանձնված լինէր թեմական իշխանութեանը։ Հէնց այդ իմաստով էլ որոշում են կայացրել, ինչպէս յայտնի դարձաւ Ս. Ցարութիւնեանի նամակից, նաև Կենտրոնական Կոմիտէը և Բարեգ. Ընկ.։

Նպաստ. Ընկ. վարչութեան գումարած խորհրդակցութիւնը նոյնպէս հարկաւոր գտաւ, որպէս զի Էջմիածինը լիազօրէ առաջնորդ Մեսրոպ եպ.-ին գումարելու Թիֆլիսի 5 հաստատութիւնների վարչութիւններին՝ ընտրելու հայրապետական կոնդակով առաջարկված երկու պատգամաւորին։

Այդ մտքով էլ որոշվեց հեռագրել Էջմիածին։

Այնուհետև վարչութիւնը որոշեց կազմակերպել «փախստականների օր» Բաքւում՝ յօգուտ գաղթական-փախստականների, ապրիլի 30-ին Համբարձման օրը, վաճառելով երբեակ համաձայնութեան էմբլեման, և գործի կազմակերպութիւնը որոշեց խնդրել պ. Քր. Վերմիշեանին վերցնել իր վրա։

Ապա վարչութիւնը, համաձայն փոխնախագահ Հ. Առաքելեանի զեկուցման, որոշեց յատկացնել Ընկերութեան միջոցներից 3000 ր.՝ հայրենիք վերադարձող պարսկահայ-փախստականների քայքայված տնտեսութիւնը վերականգնելու գործին, ծանօթանալով նախապէս Ներսէս եպիսկոպոսի միջոցով իրերի դրութեան հետ։

Վերջում որոշվեց համաձայնութեան գալ Հայ Գիւղատնտ. և Տնայն. Ընկ. հետ փախստականներին երկրագործական գործիքներ հայթայթելու վերաբերմամբ։

ՀԱՅ ՆՊԱՍՏԱՄԱՏՈՅՑ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՆԻՍՏԸ

—

Կիրակի, ապրիլի 5-ին, ցերեկվայ ժամը 12-ին Ընկերութեան նախագահ Դաւիթ խան Աւան-Իւզբաշեանի ընակարանում կայացաւ Հայ Նպաստամատոյց Ընկ. վարչութեան նիստը, որին հրաւիրված էին նաև փախստականներին օգնելու գործով Թիֆլիսում հաստատված կենտրոնական կոմիտէի, Կ. Հ. Բ. Ընկ. և Հայ Գիւղատնտ. ու Տնայնագործական Ընկ. և ծխատէր հոգևորականութեան ու հոգաբարձութեան մասնաժողովի նախագահները, որոնցից ներկայ եղան Գիւղատնտեսական և ծխ. հոգևոր. ու հոգաբարձ. մաս. ներկայացուցիչները։

Կ. Հ. Բ. Ընկ. և Կենտ. Կոմիտէի նախագահ Ս. Ցարութիւնեան մի գրութեամբ յայտնեց, թէ այդ օրը նա փոխադարձ վարկի ընկերութեան անդամների ընդհանուր ժողովի պատճառով անկարող է ներկայ գտնվել, բայց խնդրել է խորհրդի փոխնախագահ բժ. Աղասեանին գալ, որ սակայն ներկայ չը գտնվեց։

Ցիշեալ հաստատութիւնների ներկայացուցիչներին Նպ. Ընկ. վարչութիւնը հրաւիրել էր խորհրդակցելու այն երկու պատգամաւորի ընտրութեան հարցի առիթով, որոնք համաձայն Ամենայն Հայոց Կաթողիկոսի կոնդակի, որ ի..., պէտք է մասնակցեն Էջմիածնում Եղբայրական Օգնութեան Կենտրոնական Ցանձնաժողովի գործունէութեանը Թիֆլիսի եղբայրական օգնութեան հինգ մարմինների կողմից։

Մտքերի փոխանակութիւնը պարզեց, որ Թիֆլիսի հինգ հաստատութիւններին գումարելու նախաձեռնութիւնը մատնանշված չէ կոնդակի մէջ, մինչդեռ ցանկալի է, որ այդ գործը յանձնված լինէր թեմական իշխանութեանը։ Հէնց այդ իմաստով էլ որոշում են կայացրել, ինչպէս յայտնի դարձաւ Ս. Ցարութիւնեանի նամակից, նաև Կենտրոնական Կոմիտէը և Բարեգ. Ընկ.։

Նպաստ. Ընկ. վարչութեան գումարած խորհրդակցութիւնը նոյնպէս հարկաւոր գտաւ, որպէս զի Էջմիածինը լիազօրէ առաջնորդ Մեսրոպ եպ.-ին գումարելու Թիֆլիսի 5 հաստատութիւնների վարչութիւններին՝ ընտրելու հայրապետական կոնդակով առաջարկված երկու պատգամաւորին։

Այդ մտքով էլ որոշվեց հեռագրել Էջմիածին։

Այնուհետև վարչութիւնը որոշեց կազմակերպել «փախստականների օր» Բաքւում՝ յօգուտ գաղթական-փախստականների, ապրիլի 30-ին Համբարձման օրը, վաճառելով երբեակ համաձայնութեան էմբլեման, և գործի կազմակերպութիւնը որոշեց խնդրել պ. Քր. Վերմիշեանին վերցնել իր վրա։

Ապա վարչութիւնը, համաձայն փոխնախագահ Հ. Առաքելեանի զեկուցման, որոշեց յատկացնել Ընկերութեան միջոցներից 3000 ր.՝ հայրենիք վերադարձող պարսկահայ-փախստականների քայքայված տնտեսութիւնը վերականգնելու գործին, ծանօթանալով նախապէս Ներսէս եպիսկոպոսի միջոցով իրերի դրութեան հետ։

Վերջում որոշվեց համաձայնութեան գալ Հայ Գիւղատնտ. և Տնայն. Ընկ. հետ փախստականներին երկրագործական գործիքներ հայթայթելու վերաբերմամբ։

ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՎՆԱՍՎԱԾՆԵՐԻ ՕԳՆԵԼՈՒ ԳՈՐԾԸ

—

Պատերազմից վնասվածներին օգնող Կովկասեան Կոմիտէի վերջին՝ 35-դ նիստում, մարտի 26-ին, արվեցին հետևեալ որոշումները.

1) Կուբանի շրջանային կոմիտէին ուղարկել 360 ր. հոգեկան-հիւանդներին երկու ամիս պահելու համար։

2) Պատերազմից վնասվածներին օգնող Թիֆլիսի նահանգական կոմիտէի նախագահ՝ նահանգապետ Սարախովսկիին բացել 20,000 ր. վարկ՝ Կարսից և Ալէքսանդրոպոլի գաւառից Թիֆլիսի նահանգը փոխադրած փախստականներին օգնութիւն հասցնելու համար, դրա հետ միաժամանակ խնդրելով նահանգապետին՝ փախստականների օգնութեան գործին մասնակից անել գաւառական կոմիտէին և տեղական հասարակական այժերին։

3) Թիֆլիսի նահանգական կոմիտէի կարգադրութեանը յանձնել 6 վագոն պաքսիմատ, որ ուղարկել է Տատիանեան Կոմիտէը։

4) Հեռագրով խնդրել Մեծ Իշխանուհի Տատիանա Նիկոլայեվնային 100,000 ռուբ. յատկացնելու մասին, փախստականներին ապրիլ ամսին օգնելու համար, որովհետև միջոցներ չը կան։

Փախստականների օգնութեան գործի համար Տատիանեան Կոմիտէից ստացվել է 255,000 ր., որից ծախսվել է 237,631 ր. 85 կ., ազատ մնում է 17,368 ր. 15 կ.։

Ուրիշ նուիրաբերութիւններ՝ դրամով՝ կոմիտէը ստացել է 81,294 ր. 36 կոպէկ։

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԱԺՇՏ. ԸՆԿ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

—

Կիրակի, ապրիլի 5-ին, Գրական Գեղագիտական Սալոնում իշխ. Անդրոնիկովի նախագահութեամբ կայացաւ Թիֆլիսի Ժողովրդ. Երաժշտ. Ընկ. ընդհանուր ժողովը։ Վարչութեան նախագահ Ե. Տէր-Դաւթեան մի փայլուն ճառով բացեց ժողովը, արծարծելով ժողովրդ. երաժշտ. կրթութեան անհրաժեշտութիւնը, ու հրաւիրեց ժողովականներին ընտրել ընդհանուր ժողովի համար նախագահ, որ որոշեցին ծափերի տակ ընտրվեց իշխան Ե. Զ. Անդրոնիկով։ Կարճ ճառով շնորհակալութիւն յայտնեց իշխանը իրան արած պատուի համար, ապա անցաւ հերթական հարցերին։ Քննվեցին և հաստատվեցին նախորդ տարվայ հաշիւը, 1915 թ. նախահաշիւը և յետոյ եղան ընտրութիւններ վարչութեան ու վերատուգիչ յանձնաժողովի անդամների։ Վարչութեան անդամներ ընտրվեցին ա. ա. Մինկևիչ, Գօրչակով, պ. պ. Աղասով, Աբգարով, Կուբրատով, Գուչերով, Պալիև, Պրէվիտերա և Ե. Տէր-Դաւթեան։ Սրանց թեկնածուներ՝ իշխան Բէհբութեան, պ. պ. Բրօլի, Պլավկի, Փուղինեան, Ֆէդորչենկո և տ. Գուլուլեան։

Ժողովը փակվեց ցերեկվայ ժամը 3-ին։ Ընդհանուր ժողովի նախագահ իշխան Ե. Զ. Անդրոնիկով և վարչութեան նախագահ Ե. Տէր-Դաւթեան ջերմ շնորհակալութիւն յայտնեցին Տ. Նազարեանին, որ սիրալիր աջակցում է Թիֆլիսի Ժողովրդ. Երաժշտ. Ընկ. և ձրիաբար ապաստարան տալիս այդ ընկ. ընդհանուր ժողովներին։

Սրտագին շնորհակալութիւն արին և այդ ընկ. վարչութեան քարտուղար Ա. Ա. Պրէվետերին, որ մեծ սիրով յաղթահարելով ամեն խոչընդոտ՝ Թիֆլիսի Ժողովրդ. Երաժշտ. Ընկ. օր-օրի վրա աւելի է ջանում բարգաւաճ վիճակի մէջ դնել։ N.

ՀԱԵԿ. ԲԱՐԵԳՈՐԾ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆԸ

—

Հայկ. Բարեգ. Ընդհանուր Միութիւնը, որ գործում է Պօղոս Նալբանդեան նախագահութեամբ, Կովկասի իր լիազօր Հ. Առաքելեանին ուղղել է հետևեալ գրութիւնը։

*
* *

Մեծ. տէր Հ. Առաքելեան.

Տփղիս

Տիար,

Ցաջորդաբար ստացանք ձեր յետագայ հեռագիրները յանուն Նալբանդ փաշայի։

1) «Թոյլատրութեամբ ռուսական կառավարութեան, Թիֆլիսում հիմնվել է մի ընկերութիւն «Նպաստամատոյց» անունով, օգնելու համար Պարսկաստանից, Թուրքիայից փախստական հայ գաղթականներին՝ վերադառնալու իրանց հայրենիքը։ հաճեցէք ձեր օգնութիւնն ևս շնորհել։

«Նախագահ Խան Սաղնակիի

«Փոխ-նախագահ Հ. Առաքելեան»

2) «Համաձայն վերջերս հրատարակված Ամենայն Հայոց Կաթողիկոսի կոնդակի, Կենտրոնական Կոմիտէը գտնվում է Էջմիածնում, նախագահութեամբ Կաթողիկոսի, որին և պէտք է ուղարկել գումարները։ Նոր հիմնված «Նպաստամատոյց» ընկերութիւնը, թոյլատրված կառավարութիւնից, ունի յատուկ նպատակ վերադարձնել հայրենիք փախստականներին, վերականգնել նրանց քայքայված գիւղատնտեսութիւնը, մի նպատակ, որին հետամուտ է և Միութիւնդ, ուստի և պէտք ունի աջակցութեան։ Հ. Առաքելեան»։

Ձեզ պատասխանեցինք հետևեալ հեռագիրներով.

1) «Միութիւնը բացեց հանգանակութիւն և ուղարկեց արդէն երկու անգամ 10,000-ական ռ. Թիֆլիսի Կենտրոնական Կոմիտէին, որ գտնվում է Կաթողիկոսի հովանաւորութեան ներքոյ։ Բացատրեցէք, ինչու համար է հիմնված նոր ընկերութիւնը. կը սպասենք բացատրութիւնների նոր առաքումներ կատարելուց առաջ։ Նուպար»։

2) «Ուղարկեցինք Կաթողիկոսին 10,000 ռ. և հեռագրեցինք Մեսրոպ եպիսկոպոսին՝ ուղարկած 20,000 ռուբլին ծախսել ըստ հրահանգաց Նորին Վեհափառութեան։

«Նուպար»։

Անմիջապէս որ ստացանք ձեր առաջին հեռագիրը, շփոթութիւն մը ծագեցաւ մեր միտքին մէջը, և կասկածեցանք թէ Կովկասի մէջ մրցակից և գուցէ հակընդդէմ մարմիններ կազմված են ներկայ հանգանակութեան առթիւ։

Ձեր վերջին հեռագրին պարունակութիւնէն, ինչպէս և «Մշակի» վերջին թիւերէն, զոր երկամեայ դադարէ մը վերջ սկսանք ընդունիլ, հասկացանք, թէ Վեհ. Կաթողիկոսի կոնդակով և իր հովանաւորութեան ներքև ս. Էջմիածնի մէջ կեդր. Նպաստ. Ցանձնաժողով մը կազմուած է, ինչպէս և ուրիշ կեդր. Ցանձնաժողով մը Տփղիսի մէջ, որ կը գործէ Կովկասի Հայ Բարեգ. Ընկ. հովանիին ներքոյ, և որուն պատուակալ նախագահն է առաջնորդ դեր. տէր-Մեսրոպ եպիսկ. Տէր-Մովսէսեան, իսկ ատենապետը՝ պ. Սաման Ցարութիւնեան։

Հասկացանք նաև թէ «Մշակի» նախաձեռնութեամբ և ձեր ատենապետութեամբ տեղի կազմուած է Հայ Նպաստամատոյց Ընկերութիւն մը, և որուն նպատակն է, անշուշտ երբ որ պատեհ ժամը հասնի, իրենց տեղերը վերադարձնել տարաբաղդ գաղթականները և վերահաստատել իրենց քանդուած օջախները։ Արդէն, կերևայ թէ, աւելի կամ նուազ միևնոյն նպատակին համար, բազմաթիւ մարմիններ կազմուած են Կովկասի մէջ, որ ապացոյց են այնքան ազգասիրական անկեղծ եռանդի մը՝ որ պատիկը բերէ Կովկասի հայութեան, օրքան և անհամերաշխ ոգիի մը՝ որ արգելք կըլլայ միակ կազմով մը, միակ նպատակի համար, միացնել բոլոր ուժերը, աշխատութեան բաժանումի հիման վրայ։

Արդ, չուզելով թափառիլ մանուածապատ նկատումներու մէջ, և նախընտրելով աւելի պարզ դիրք մը բռնել ներկայ ընդհանուր հանգանակութեան գործին մէջ, զոր մեր Միութիւնը բացաւ արտասահմանի մէջ, ամեն տեղ, ուր որ մասնաճիւղ մը ունի, որոշեցինք այսուհետև՝ ցնոր անօրէնութիւն՝ հանգանակած գումարները ղրկել ուղղակի Վեհ. Կաթողիկոսին, խնդրելով որ միմիայն գաղթականներուն համար գործածուի, իր բարձր հովանաւորութեան ներքոյ։ Այս նպատակով, հեռագրեցինք դեր. Մեսրոպ եպ.-ի, որ իրեն ղրկուած 20,000 ռուբլին գործածէ Վեհ. Կաթողիկոսի հրահանգներուն համաձայն։ Նոյն որոշումը հաղորդեցինք նաև Նորին Վեհափառութեան, խնդրելով նաև որ հեռագրաւ հաստատէ ուղղակի ղրկուած 10,000 ռուբլիի ստացումը։ Ցաւալի է արդարև, որ ոչ Տփղիսէն*) և ոչ ալ Էջմիածնէն ցարդ ղրկուած 30,000 ռուբլիին ստացումը չհեռագրուեցաւ մեզի, որով մեր մօտ պատրաստ գտնուած 20,000 ռուբլին առ այժմ կը յամենանք հեռագրաւ փոխադրելու Էջմիածին։

Այս պայմաններուն մէջ, հաճեցէք՝ իբրև Միութեան ներկայացուցիչ՝ գործ դնել ձեր հսկողութիւնը, որպէսզի բուն նպատակին գործածուին յանուն Միութեան և ի հաշիւ հանգանակութեան ղրկուած նպաստները, և այդ մասին ոչ մէկ շեղում հնարաւոր ըլլայ։

Ուրախ ենք յայտնելու, որ մեր տարաբաղդ հայրենակիցներուն թշուառ վիճակը այնպիսի յուզմունք մը յառաջ բերաւ արտասահմանի գաղութներուն մէջ, որ Միութեան կոչը ամեն տեղ սիրով ընդունուեցաւ և ամեն կողմէ նպաստներ կը հասնին միշտ, զոր հետզհետէ պիտի փութանք դնել Վեհ. Կաթողիկոսի տրամադրութեան տակ։

Գիտենք թէ Կովկասի հայութիւնը գեր-բազմաց անձնուիրութեամբ մը վերաբերուեցաւ ու կը վերաբերուի ազգային ներկայ ճգնաժամուն, բայց կը զգանք նաև թէ իր պարտականութենէն աւելին կընէ, ու այդ համոզումով է որ Միութիւնը ևս ստանձնեց միջնորդութիւնը Կովկասի և արտասահմանի հայութեան միջև, դրականապէս իր մասնակցութեան բաժինը բերելու համար ազգային փրկութեան այդ մեծ գործին՝ որուն այսօր նուիրուած է ամբողջ ազգը։

Խորին յարգանքով

Ի դիմաց Հ. Բ. Ընկ. Միութեան Կեդր. Վարչ. Ժողովի՝

Ատենապետ՝ Նագուպ Արթին փաշա

Ատենադպիր՝ Վ. Մալէզեան

*
* *

Տպելով այս գրութիւնը, պէտք է արձանագրենք, որ այժմ, երբ այդ գրութեան մէջ արտայայտված ցանկութիւնը՝ միացնել բոլոր գործող այժերը մի կազմի մէջ, աշխատանքի բաժանման հիման վրա, իրագործվել է հաստատմամբ Էջմիածնի Կենտրոնական-ղեկավար Ցանձնաժողովի, Միութիւնը, անտարակոյս, աւելի մեծ եռանդով պէտք է նպաստէ այդ Ցանձնաժողովին՝ փախստականների օգնութեան գործը վարելու համար։

*) Վերջին պահուն ստացանք Մեսրոպ եպ.-ի հեռագիրը։

զինուորական, մի օֆիցէր, ծագումով հրէայ, մեղադրվում է պետական դաւաճանութեան, գաղտնի յարաբերութեան մէջ Գերմանիայի հետ։ Գործը չափազանց մութն է, չափազանց բարդ. հաստատ ապացոյցներ չը կան, որ դաւաճանողը Դրէյֆուսն է, այլ ոչ մի ուրիշը. բայց զինուորական դատարանը, հակառակ օրէնքի և արդարադատութեան, դատապարտում է նրան աքսորի՝ Սատանայի կղզում։

Ահա այդ օրից հրապարակ է գալիս Զոլան որպէս քաղաքական գործիչ։ Նա պահանջում է վերականգնել ճշմարտութիւնը, պահանջում է վերաքննել գործը։

Սկսվում է մի կատաղի կռիւ հին, պահպանողական և երիտասարդ-ազատամիտ Ֆրանսիայի միջև։ Զոլան որպէս վերջինների ներկայացուցիչ՝ կատաղի արշաւանք է սկսում «Ֆիգարոյի» էջերում, բայց նրա երկուերիք խիստ, դիկտատորական ոճով գրված յօդուածներից յետոյ՝ լրագիրը, հակառակ բանակի ճնշման ներքոյ, հրաժարվում է այլևս տեղ տալ Զոլայի վարած պայքարին։

Տաղանդաւոր բոմանիստը չը գտնելով ոչ մի օրգան իր մտքերի ազատ արտայայտման համար, ստիպված է լինում գրքոյկների, բրոշիւրների միջոցով արթնացնել հասարակական գիտակցութիւնը։ Լոյս են տեսնում «Նամակ երիտասարդութեան», «Նամակ Ֆրանսիային» բրոշիւրները, որ տարածվում են ահագին քանակութեամբ։ Այդ նամակները, Զոլայի մեւս յօդուածների հետ Դրէյֆուսի գործի առիթով, հրատարակվում են յետագայում «Ճշմարտութիւնը գալիս է» առանձին գրքոյկով։

Բայց ահա աշխարհ է գալիս մի նոր լրագիր, «L'Aurore»-ը, որ բանում է Զոլայի առաջ իր էջերը. և յունվարի 14-ին 1898 թ. Զոլան այդ լրագրում հրատարակում է իր հռչակաւոր բաց նամակը հանրապետութեան նախագահին՝ «Ես մեղադրում եմ» վերնագրով։

Նա մեղադրում է կառավարութիւնն ու դատարանը, զինուորականութիւնն ու մինիստրներին՝ իրաւունքը և ճշմարտութիւնը խախտելու մէջ։

Նամակը դղրդեցնում, տակն ու վրա է անում ամբողջ Պարիզը. յուզվում, ալեկոծվում է ամբողջ Ֆրանսիան, սկսվում է մի չը տեսնված կռիւ պաշտօնական Ֆրանսիայի և ազատ քաղաքացու միջև, պահպանողական, շովինիստ միլիտարիստական Ֆրանսիայի և հռչակաւոր վիպասանի միջև։

Կառավարութիւնը դատի է կանչում Զոլային. մեղադրում է նրան զրպարտութեան մէջ և... դատապարտում նրան։

Բայց Զոլան չէ ընկճվում. նա շարունակում է իր պայքարը, յամառ կերպով պահանջում է Դրէյֆուսի գործի վերաքննութիւնը, պահանջում է անմեղ դատապարտվածի կատարեալ արդարացումը։

Նա ապացուցում է, որ դա մի դժբաղդ թիւրիմացութիւն, մի դատաստանական սխալ չէր, որ անմեղ դատապարտվածը զոհ է համապետական մի չարիքի, որ խոր արմատներ է ձգել ժամանակակից Ֆրանսիայում։ Նա ցոյց էր տալիս հասարակութեանը այն խոր վիհը, որի առաջ կանգնած է հանրապետական Ֆրանսիան, և պահանջում էր նրա բարոյական վերածնութիւնը։

Կառավարութիւնը կանգնած էր մի դժուար դիրքի առաջ. կամ զոհել, ամնատակ տալ արդարադատութիւնը կամ բանալ մի դիպլոմատիական գաղտնիք, որ դուցէ միջազգային բարդութիւնների առիթ տար։

Պահպանողական և միլիտարիստական Ֆրանսիան ամեն միջոց գործ է դնում Զոլային տապալելու համար. Զոլան ենթարկվում է ամենասոսկալի վիրաւորանքների. ամբոխը մռնչում, յարձակվում է հրէայի պաշտպան Զոլայի վրա. բայց Զոլային կողմնակից է լուսաւոր Ֆրանսիան, նրա լաւագոյն ներկայացուցիչները։

Միևնոյն ժամանակ ամբողջ Եւրոպան, ամբողջ քաղաքակիրթ մարդկութիւնը լարված ուշադրութեամբ հետևում է այդ քաղաքական կռիւին, որ վերջանում է ճշմարտութեան յաղթանակով։

Ֆրանսիական մեծ ժողովուրդը, իր արժանաւոր քաղաքացու գերբնական ջանքերով, մի մեծ, բարոյական յաղթանակ է տանում. Դրէյֆուսը վերադարձվում է աքսորից, իսկ երիտասարդ Ֆրանսիայի արթնացած գիտակցութիւնը կենդանի է կանչում իրաւունքի, ազատութեան, առաջադիմութեան մոռացված լոզունգները։

Էմիլ Զոլայի վարած այդ հասարակական պայքարը մի նոր լուսաւոր շերտ է մրցնում նրա աշխարհահայեցողութեան մէջ. այդ ժամանակաշրջանից, նրա բուրժուական հակումները տեղի են տալիս գաղափարական. իր ուժեղ անհատականութեանը յատուկ եռանդով Զոլան նուիրվում է տիրող կարգերի վերանորոգութեան գործին։ Եւ երբ Դրէյֆուսի գործի փոթորկալից ալիքները սկսում են խաղաղվել, նա ձեռնարկում է «Զորս աւետարանները» բոմանների մի նոր սերիայի հրատարակութեան. նոր լուսեղների՝ ընդհանուր բարօրութեան, ճշմարտութեան, և արդարադատութեան գեղարուեստական քարոզին։

Ցաջորդաբար լոյս են տեսնում նրա «Բեղմնաւորութիւն», «Աշխատանք», «Ճշմարտութիւն» բոմանները։ Իսկ չորրորդ բոմանը՝ «Արդարադատութիւնը» դեռ նոր սկսած, նա մնաւ մի դժբաղդ պատճառանքից։ իր ննջարանի բուխարու կրակի ածխաթթուից։

Զոլան մնաւ 1902 թ.։ Նա լռեց. բայց չը լռեցին նրա հակառակորդները. և նոյնիսկ նրա բաց դագաղի առաջ ընդհարվեցին երկու հասանքներ՝ հին և նոր Ֆրանսիան։

Թէև կատաղի, բայց փոքրաթիւ էին արդէն պահպանողական տարրի ներկայացուցիչները և նրանք նահանջեցին վերածնված Ֆրանսիայի երիտասարդ այժերի առաջ։

Սօֆիա Դանիէլ-Բէկ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(Ուղղված Թիֆլիսի նահանգապետին)

—

Խնդրում եմ Ձերդ Գերազանցութեան անել շուտափոյթ կարգադրութիւն՝ յայտարարելու ձեր իրաւասութեանն յանձնված նահանգում գտնվող փախստականներին, որ ես անպայման արգելք եմ դրել փախստականներին կովկասեան սահմաններից դուրս մեկնելու վերաբերմամբ։ Փախստականները, այն էլ ժամանակաւորապէս, այսինքն մինչև պատերազմական գործողութիւնների վերջանալը, կարող են բնակվել Դանձակի, Երևանի և Թիֆլիսի նահանգներում։ Զը ցանկացողները պէտք է վերադառնան իրանց հայրենիք։ Այդպիսիների վերադարձը հայրենիք հեշտացնելու համար արդէն արված է կարգադրութիւն սահմանային իշխանութիւններին՝ առանց արգելքի թոյլ տալ անցնել սահմանը և իրեղէններից մաքս չը վերցնել։ Հետևանքի մասին խնդրում եմ ինձ հաղորդել։

Գեներալ-լեյտենանտ Վօլսկի

զաքական կուրի, որ վերջանում է ճշմարտութեան յաղթանակով։

Ֆրանսիական մեծ ժողովուրդը, իր արժանաւոր քաղաքացու գերբնական ջանքերով, մի մեծ, բարոյական յաղթանակ է տանում. Դրէյֆուսը վերադարձվում է աքսորից, իսկ երիտասարդ Ֆրանսիայի արթնացած գիտակցութիւնը կենդանի է կանչում իրաւունքի, ազատութեան, առաջադիմութեան մոռացված լոզունգները։

Էմիլ Զոլայի վարած այդ հասարակական պայքարը մի նոր լուսաւոր շերտ է մրցնում նրա աշխարհահայեցողութեան մէջ. այդ ժամանակաշրջանից, նրա բուրժուական հակումները տեղի են տալիս գաղափարական. իր ուժեղ անհատականութեանը յատուկ եռանդով Զոլան նուիրվում է տիրող կարգերի վերանորոգութեան գործին։ Եւ երբ Դրէյֆուսի գործի փոթորկալից ալիքները սկսում են խաղաղվել, նա ձեռնարկում է «Զորս աւետարանները» բոմանների մի նոր սերիայի հրատարակութեան. նոր լուսեղների՝ ընդհանուր բարօրութեան, ճշմարտութեան, և արդարադատութեան գեղարուեստական քարոզին։

Ցաջորդաբար լոյս են տեսնում նրա «Բեղմնաւորութիւն», «Աշխատանք», «Ճշմարտութիւն» բոմանները։ Իսկ չորրորդ բոմանը՝ «Արդարադատութիւնը» դեռ նոր սկսած, նա մնաւ մի դժբաղդ պատճառանքից։ իր ննջարանի բուխարու կրակի ածխաթթուից։

Զոլան մնաւ 1902 թ.։ Նա լռեց. բայց չը լռեցին նրա հակառակորդները. և նոյնիսկ նրա բաց դագաղի առաջ ընդհարվեցին երկու հասանքներ՝ հին և նոր Ֆրանսիան։

Թէև կատաղի, բայց փոքրաթիւ էին արդէն պահպանողական տարրի ներկայացուցիչները և նրանք նահանջեցին վերածնված Ֆրանսիայի երիտասարդ այժերի առաջ։

Սօֆիա Դանիէլ-Բէկ

ԿՐԿՆԱՄՈՒՍՈՒԹԻՒՆ

Մեր արդի բարքերն այնքան ապականվել են, ընտանեկան սրբութիւնն այնքան աղջնամարել է, որ այսօր եղակի չեն կրկնամուսնութեան դէպքերը մեր կեանքում։ Օրինաւոր կնոջ կենդանութեամբ ապօրինի կին պահելու մոլութիւնը վաղուց է քաղաքացիութիւն ստացել մի տեսակ և նրա վրա նոյնիսկ հաշտ աչքով նայողների թիւը տակոսներ է կազմում։ Իսկ օրինաւոր ամուսնու կենդանութեամբ օրինաւոր կարգով, բայց գաղտագողի, ամուսնանալու և երկրորդ կին առնելու մոլութիւնը դեռ նոր է պալտրաւորվում մեր ազգային, այսպէս ասած, բարոյական մարմնի վրա և դեռ չը գիտենք, նա կը պատուաստվի արդեօք մեր կեանքի այդ ապարիզում, թէ օրէնքի խստութիւնը կարող կը լինի վերջնականապէս հրկիզելու նրա նորատունկ արմատները։

Իմ կեանքի մէջ կրկնամուսնութեան առաջին դէպքին հանդիպել եմ և զարմացել որանից մօտաւորապէս 8 տարի առաջ Բագուում. մէկ էլ, կարծեմ, 1914 թ.-ին էր «Մշակի» էջերում նկարագրված, թէ ինչպէս գանձակեցի մի քահանայ օրէնքով իրաւազուրկ էր յայտարարվել իր կատարած կրկնամուսնութեան պատճառով. այսօր էլ երրորդ դէպքն է նոյնպիսի ամուսնութեան, որի դատավարութեանը դժբաղդութիւն ունեցայ ներկայ լինելու։ Անդրկովկասեան երկրի Կուշկա ամրոցում։

Դատվում է Գանձակ նահանգի Արէշ գաւառի մեծ-սեպհականութեան Բախշի Գալստեան Խաչանեանցը։ Հայրենիքում սրանից շատ առաջ նա ամուսնացել է օրինաւոր կարգով և այս ամուսնութիւնից յարուցել երկու զաւակ։ Օտարութիւն գալով, Բախշին հաստատվում է Կուշկայում։ Այստեղ ինչ-ինչ հանգամանքներով ծանօթանում է Շուշի գաւառի Շոշու գիւղացի օր. Վարսենիկ Համբարձումեան Զախարեանի (14 տարեկան) հետ և 1908 թ.-ին՝ ճանապարհվելով Մեքի՝ հայոց եկեղեցում ամուսնանում է կրկին անգամ։

Այս առիթով դատ է բաց անում Բախշու դէմ նրա առաջին օրինաւոր կինը։ Դատը վարում է շրջանային վիւնօրական ատեանը և Բախշուն յանցաւոր ճանաչելով՝ բերդարգելութեան ենթարկում 3 տարի 7 ամիս ժամանակով։

Ցաւալի է այստեղ մանաւանդ այն հանգամանքը, որ Բախշու նման բաղդախնդիր մարդիկ թիւրիմացութեան զոհ են դարձնում պսակադիր քահանաներին։ Լաւ է պատահում, որ ստիպված են լինում հաւատալու նման ամուսնացողի և նրա վկաների հաւաստիացումներին և պսակում են նրան։

Կուշկա Ա. ք. Տէր-Ոսկանեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍ

✦ Աւետման տօնի պատճառով՝ «Մշակի» հետևեալ համարը լոյս կը տեսնի հինգշաբթի, ապրիլի 9-ին։

✦ Փախստականներին օգնող քաղաքային յանձնաժողովի նախագահ Հ. Առաքելեանը ներկայացրել է Քաղաքային Կենտրոնական Կոմիտէին մի մանրամասն զեկուցումն յանձնաժողովի գործունէութեան մասին և, հաղորդելով օրոշ տեղեկութիւններ, առաջարկել է հիմնել մի հիւանդանոց 25 մահճակալով փախստական հիւանդների համար, յատկացնելով մօտ 6000 ր., իսկ փախստականների պահպանութեան համար—որոնց թիւը մօտ 6000 է—յատկացնել 3 ամսվայ ընթացքում 20,000 ռուբլի, ընդամենը 26—30,000 ր.։ Քաղաքային Կենտրոնական Կոմիտէը որոշել է բանալ հիւանդանոց առ այժմ 15 մահճակալով, և յատկացրել է այդ նպատակով 3000 ր., իսկ մնացած գումարի մասին նա դիմելու է Կովկասեան Գլխաւոր Կոմիտէին և խնդրելու տալ իրան խնդրված գումարը։

✦ Կովկասի քաղաքների միութեան լիազօր Ալ. Խատիսեան ներկայացաւ փոխարքային քաղաքացիական մասի օգնական Ն. Լ. Պետերսոնին, խօսելու այն մասին, որ մտադրութիւն կայ Թիֆլիսում գումարել Կովկասեան քաղաքների ներկայացուցիչների համագումար՝ ընդհանուր միջոցներ մշակելու անհրաժեշտ մթերքների թանգութեան դէմ կռուելու համար։ Հօֆմէյստէր Ն. Լ. Պետերսոն խիստ համակրութեամբ է վերաբերվել համագումարի գաղափարին։

✦ Կովկասի զինուորական շրջանային գլխաւոր պետ Վօլսկիի կարգադրութեամբ «Кав. Сл.» թերթի խմբագիրը ենթարկվել է 200 ր. տուգանքի թերթի № 72-ի մէջ տպված առաջնորդողի համար։

✦ Կիրակի, ապրիլի 5-ին, երեկոյեան սաստիկ յորդ անձրևից մի շարք փողոցներում գոյացան պղտոր ջրի հսկայական հոսանքներ։ Մօսկովսկայա և Զերքեզովսկայա փողոցներով ջուրը հոսում էր մեծ գետի նման, մանաւանդ վերջին փողոցում, ուր կանգ էր առել ամեն տեսակ երթևեկութիւն։ Էլեքտրաքարշն անգամ չէր բանում։

✦ Պետրոգրադի քաղաքագլուխ կոմս Տոլստոյը յայտնել է քաղաքագլուխ Ալ. Խատիսեանին, որ Պետրոգրադի ինքնավարութեան կազմած սանիտարական դասընթացքները մօտ ժամանակներս կաւարտեն 500 հոգի, որոնցից մի քանիսը ցանկութիւն են յայտնել մեկնել այն քաղաքները, որոնք գտնվում են պատերազմաբեմերին մօտ կամ հանդիսանում են վիրաւորների կենտրոնացման վայր։ Այդ ցանկութիւնների համաձայն, Պետրոգրադի քաղաքագլուխը խնդրում է յայտնել, թէ Կովկասի քաղաքների միութիւնը ներկայումս կարիք չէ զգում արդեօք սանիտարներին։

✦ Հայկական Դրամատ. Խմբակցութեան վարչութիւնը համաձայն իր օրոշման՝ ամերային թատերաշրջանի բոլոր ներկայացումների մուտքերից յատկացնել 2% պատերազմից վնասվածների օգտին, ներկայացրեց Քաղաքային Կենտրոնական Կոմիտէին 83 ր. 83 կ., որ կազմում է ամերային սեզոնին տրված ներկայացումների ստացված մուտքերի 2%-ը։

✦ Ստացանք Զուրաբ և Աւետիք Ե. Խաչատրեաններից՝ հանգուցեալ Շաքրօ Կ. Մարտիրոսեանցի դագաղի վրա պսակ դնելու փոխարէն՝ յօգուտ պարսկաստանցի հայ փախստականների՝ 10 ռուբլի։

✦ 6-րդ թաղամասի թաղական բժիշկ Հայրապետեան դիմելով քաղ. դումայի իրաւասու Զօրեանի և Պետրոսեանի մակրօնի գործարանը, սրա հակա-սանիտարական դրութեան մասին կազմել է մի արձանագրութիւն։

✦ «Կարմիր ձուկ» յանձնաժողովը ապրիլի 3-ի իր նիստում որոշել է, ամսիս 19-ին, Ալէքսանդրեան այգում, կազմակերպել վիճակախաղ յօգուտ պատերազմից վնասվածների։

✦ Դիմուրէ արուարձանում, Ելիսավետինսկայա և Բաթումսկայա փողոցների անկիւնում բացված է դեղատուն։

ԿՈՎԿԱՍ

✦ Թիֆլիսի պօստ-հեռագրական վարչութիւնը Քութայիսի նահ. Խարալի գիւղում բացել է պօստային բաժանմունք, ուր ընդունվում են և հեռագիրներ։

ՌՈՒՍԱՍՏԱՆ

✦ «Н. Вр.»-ն հաղորդում է. «Ապրիլի 3-ին մինիստրները ամբողջ կազմով մեկնեցին Ցարսկոյէ-Սէլօ արտակարգ խորհրդակցութեան՝ կարևորագոյն հարցերի առիթով։ Նիստին զեկուցագրեր կարդացին ներքին գործերի և առևտրի մինիստրները. վիճաբանութիւններին մասնակցեց նաև առևտրի ու արդիւնաբերութեան նախկին մինիստր Տիմաշէվը»։

✦ Ռուսաստանը 4 միլիոն ռուբլու սեպարատօրների, մօտօրների, երկրագործական գործիքների և շոգեկաթսաների պատուէր է տուել Շվէդիայում։

✦ «Н. Вр.»-ն լսել է, որ զինուորական մինիստրութիւնը հարցապնդել է դատարանին յանձնելու քաղաքային վարչութեանը նրա համար, որ նա միջոցներ ձեռք չէ առել ապահովելու Պետերբուրգը խմելու ջրով։

✦ Պետրոգրադի նաւթարդիւնաբերողները տեղեկացրել են Բագուի գրասենեակներին, որ վարձատրութիւնն աւելացնելը ոչ թէ աշխատավարձի յաւելում է, այլ ժամանակաւոր նպաստ կեանքի թանգութեան պատճառով։

✦ Պրիբալտիկ նահանգներում զէմսկո մացնելու աշխատանքները ներքին գործերի մինիստրութեան մէջ աւարտվել են։

✦ Իրկուտսկի գեներալ-նահանգապետը խորհրդակցութիւն է գումարել հասարակական հաստատութիւնների ներկայացուցիչներից Սիբիրում զէմսկո մացնելու հարցի առիթով։

✦ Պետրոգրադի մահմէդական կոմիտէը խնդրել է թոյլ տալ ունենալ մահիկի նշան։ Կարմիր Խաչի վարչութիւնը պատասխանել է կոմիտէին, որ այդ հարցը կարող է լուծել միայն Ժընէվի կոնֆերէնցիան։

ԴԻՊԼՈՄ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Сборникъ Дипломатическихъ Документовъ. Реформы въ Арменіи. 26 ноября 1912 г.—10 мая 1914 года. Изд. Министерства Иностр. Дѣлъ Петроградъ, 1915 г.

Ժողովածու Դիպլոմատիական Փաստաթղթերի։ Բէֆորմները Հայաստանում։ 26 նոյեմբեր 1912 թ. սկսեալ ցկայիս 1914 թ.։ Հրատար. արտաքին գործերի մինիստրութեան։

XXVI

Նարնջագոյն Գրքի 131-րդ դոկումենտը դեսպանի պաշտօնակատար Գուլկեվիչի հեռագիրն է արտաքին գործերի մինիստր Սազոնովին, 1914 թ. յունվարի 7-ին, որով յայտնում է, թէ Էրզրումի անգլիական և ռուսական հիւպատոսներից ստացված տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ մուսուլման ֆանատիկոսութիւնը կարող է բռնկվել ըէֆօրմների ներմուծման յետաձգման դէպքում։ Այդ պատճառով նա առաջարկել է մեծ վեզիրին իր կողմից հետևեալ բանաձևը. «Մինչև որ վերջնական վիճակագրութիւնը կը սահմանի զանազան կրօնների և ազգութիւնների փոխ-յարաբերութիւնները, Էրզրումի, Վանի և Բիթլիսի վիլայէթներում ընդհանուր ժողովների ընտրական անդամները պէտք է լինեն կէսը մուսուլմաններից, և կէսը ոչ-մուսուլմաններից, իսկ Սըվազի, Խարբերդի և Դիարբէքիրի վիլայէթներում ²/₃-ը մուսուլմաններից, և ¹/₃-ը ոչ-մուսուլմաններից»։ Մեծ վեզիրը համաձայնութիւն է յայտնել այդ առաջարկութեան, սակայն որովհետև նա հեղինակութիւն չունի մինիստրների խորհրդում, ուստի ինքը՝ Գուլկեվիչը դիմել է կաբինէտի ազդեցիկ անդամները՝ Թալէաթին և Խալիլին, բայց սրանք յամառօրէն մերժել են, ընդունելով հաւասար ներկայացուցչութեան սկզբունքը միայն Բիթլիսի և Վանի համար, հրաժարվելով տարածել այդ սկզբունքը Էրզրումի վիլայէթի վրա, ուստի և դեսպան Գիրսի առաջարկած բանաձևը (յունվարի 4-ի հեռագիր) դժուար թէ մինիստրների խորհուրդն ընդունի։ Բացի դրանից՝ Գուլկեվիչը առաջարկել է, որ ամեն մի համայնքի բաժինը ժողովրդական լուսաւորութեան բիւջէի մէջ որոշվի այն համեմատական չափով, որով նա մասնակցում է ժողովրդական լուսաւորութեան հարկաւորութեան մէջ։

132-րդ դոկումենտը՝ Սազոնովի հեռագիրն է Գուլկեվիչին, յունվարի 8-ից, որով յայտնում է, թէ դպրոցների մասին նրա առաջարկած բանաձևը միանդամայն ընդունելի է։ Ինչ վերաբերում է ներկայացուցչութեան հարցին, իր կողմից ամենածայրայեղ զիջումը այն կը լինի, որ ներկայացուցչութիւնը ընդունվի երեք վիլայէթների համար, այն է՝ Վանի, Բիթլիսի և Էրզրումի համար։

133-դ դոկումենտը Գուլկեվիչի հեռագիրն է Սազոնովին, յունվարի 10-ից, որով յայտնում է, թէ դպրոցական հարցի մասին բանաձևը ընդունված է, իսկ ընդհանուր խորհուրդների կազմի և պաշտօնների բաշխման մասին առաջարկը մերժված է մինիստրների խորհրդից, որ ընդունում է հաւասար ներկայացուցչութիւնը միայն Վանի և Բիթլիսի վիլայէթների համար։ Իբրև պատճառ բերվում է այն հանգամանքը, որ Էրզրումի վիլայէթում թիւրք ազգաբնակութիւնը ամենից շատ համակված է ազգային ինքնագիտակցութեամբ, և դժուար է մի անգամից արձակել թիւրք ժանդարմների և ասքերների անագին մի թիւ, որոնց մեծ մասը տեղափոխված է Մակեդոնիայից և Թրակիայից։

134-րդ դոկումենտը՝ Գուլկեվիչի հեռագիրն է Սազոնովին, յունվարի 12-ից, որով յայտնում է, թէ մեծ վէզիրը և Թալէաթ բէյը համաձայնել են մացնել հաւասար ներկայացուցչութիւնը նաև Էրզրումում, բայց ոչ անմիջապէս, ինչպէս Վանում և Բիթլիսում, այլ մի տարուց յետոյ։ Վերջին կէսը, ուր թիւրքերը չեն կամենում զիջել, ընդհանուր խորհուրդների ներկայացուցչութիւն է Սըվազի, Դիարբէքիրի և Խարբերդի վիլայէթներում։ Այդտեղ թիւրքերը հրաժարվում են զիջել ²/₃ մուսուլմանների և ¹/₃ ոչ մուսուլմանների փոխ-յարաբերութիւնը, պահանջելով որ ընտրողների թիւը սահմանվի արդէն գոյութիւն ունեցող ընտրողական ցուցակներով։ Ապա Գուլկեվիչը յայտնում է, որ վերջին ժամանակները գերմանական դեսպանատունը ոչ անկեղծ վերաբերմունք է ցոյց տալիս։

135-դը Սազոնովի հեռագիրն է Գուլկեվիչին, յունվարի 15-ից, որով յայտնում է, թէ ինքը յայտնեց Ֆախրիդդին-բէյին, որ ժամանակ է վերջացնել հայոց հարցը և չը ստեղծել անցանկալի տարաձայնութիւններ, որ կարող է խրախուսել անհանգիստ տարրերին Հայաստանում։

136-դը Գուլկեվիչի հեռագիրն է Սազոնովին, յունվարի 16-ից, որով յայտնում է, թէ ինքը տեղեկացել է, որ, մօտ ժամանակներս կայսերական կառավարութեան կողմից իր վերջին առաջարկութիւններին պատասխան չը ստացվելու դէպքում, Բ. Դուռը դիմելու է պետութիւնների միջամտութեան, որոնք մասնակցել են Ենիքեոյի անցած տարվայ խորհրդակցութեան՝ լուծելու իրանց մէջ մնացած վիճելի կէտերը։ Բ. Դուռը մտադիր է, իբր թէ, առաջարկել պետութիւններին հետևեալ երկու հարցը. ա) Ընտրական համեմատական սիստեմը հանդիսանում է արդեօք առաւել համապատասխանող անաչառութեան պահանջին, բ) հանդիսանում է արդեօք իրականութեան համապատասխանող հէնց իրանց հայերի կազմած ցուցակը, որ ապահովէր նրանց շահերը համեմատական ընտրութիւնների ժամանակ։ Գուլկեվիչ երկիւղ է կրում, որ այդպիսով յօգուտ իրանց չի լինի, առաւել ևս, որ այդ քայլի հաւանական ներշնչողը հանդիսանում է պետութիւնների ներկայացուցիչներից մէկը։

(Կը շարունակվի)

ՍՐՏԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԸ,

ծարպակալումը, սրտի սկլէրոզը, սրտի բաբախումը եւ թանչոցը, նէվրատէնիան եւ ջղային հիւանդութիւնները, սեռական թուլութիւնը, զառամութիւնը, հիշողութիւնն ու նիհարութիւնը մեծ աջողութեամբ բժշկում է Սպերմին-Պէլը, որի մասին վկայում են աշխարհիս ամենայայտնի բժիշկների բազմաթիւ դիտողութիւնները գրականութեան մէջ։

Սպերմին-Պէլը միակ իսկական, բազմակողմանի փորձված Սպերմինն է. այդ պատճառով էլ պէտք է ուշադրութիւն դարձնել։

„ՍՊԷՐՄԻՆ-ՊԷԼԻ„

անուան վրա և չը գնել կեղծվածները, հեղուկներ և սերմային գեղձերից պատրաստված մահլամներ, որպէս անպէտք նմանողութիւններ, որոնք թէ յատկութեամբ և թէ ներգործութեամբ Սպերմին-Պէլի հետ ոչմի առնչութիւն չունեն և յաճախ պարունակում են աչողութեան համար վնասակար տարրեր։

Ցանկացողներին ուղարկվում է ձրիաբար «Цѣлебное дѣйствіе Спермина» գիրքը. ամբողջ օրգանոտէրապիայով հետաքրքրվողներին ուղարկվում է՝ 4 հատ 7-կոպէկանոց նամակադրոշմ ստանալուց յետոյ՝ նոր լոյս տեսած «Цѣлительныя силы организма» գիրքը։

Սպերմին-Պէլին կայ ամենուրեք։

(№ 1) 0—1

Профессоръ Д-ръ ПЕЛЬ и С-вья
С.-Петроградъ.
Մատակարար ՆՈՐԻՆ ԿԱՑՄՏԵՐԱԿԱՆ Բեթ. Դրան

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Դրամա

Բաբատովի և Պոլոնսկիի դրամատիկական խմբի ներկայացումները ընթանում են առաջվայ պէս մեծ աջողութեամբ։ Խմբի մէջ վերջերս հրաւիրված դերասանուհի Իզաբելլա Քալանթարը մի նոր փայլ է տալիս ներկայացումներին։

Հայ դերասանուհին այս մի տարվայ ընթացքում աւելի յղկել, մշակել է իր տաղանդը և ամենայն իրաւունք ձեռք բերել ստանալու առաջնակարգ դերասանուհու համբաւ։ Եւ ուրիշ գաղափար էլ չէր կարելի կազմել նրա տաղանդի մասին, տեսնելով նրա խաղը իշխան Սումբաթովի «Старый Закалъ» պիէսի մէջ, Վէրա Բորիսովնայի դերում։ Հոգեկան տանջանքները մի կնոջ, որ սիրել է մի տղամարդի, բայց սա չէ կարեցել կապվել նրա հետ ամուսնական սիրով, որ ստիպված ամուսնացել է մի ազնիւ, պարկեշտ մարդի հետ, որ իրան պաշտում է, բայց օրին ինքը չէ սիրում—Քալանթարը տարաւ այնպիսի մեծ հմտութեամբ, որ հանդիսատեսներն իրանք համակվում էին նոյն հոգեկան տանջանքներով։

Շատ գեղեցիկ էր և այդ պաշտող ամուսնու՝ գնդապետ Օլտենի դերը կատարող Բաբատովը, որ իր պաշտած կնոջ երջանկութեան համար ինքը դիտմամբ մահվան բերանն է ընկնում։ Հ. Ա.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Պատասխան պ. Շահան Սիմօնի բաց նամակին

Թիֆլիս, 6 ապրիլի

«Մշակի» 4 ապրիլի թուոյն մէջ կարդացի ձեր բաց նամակը, որով հրապարակական կերպով բացատրութիւն կը պահանջէք, թէ «ո՞ր օրէնքով, ի՞նչ հիման վրայ» 39 մարտի հայ կաթոլիկաց ժողովոյն մէջ մերժեցի «ալլազգի» անձանց ներկայութիւնը։ Ահա մի անգամ ցմիշտ իմ պատասխանս ի գիտութիւն ընդհանրութեան. ա) Վերոյիշեալ ժողովը զուտ ծիսական էր հայ կաթոլիկաց համար, քանզի մասուլի միջոցաւ յայտարարված չէր, այլ միմիայն եկեղեցւոյն մէջ ծանուցուած։ Զարմանալի՝ բա. մինչ մենք հայ-կաթոլիկներս մեր շրջանին մէջ կամ մեր ժողովներու մէջ ազատ չենք. մինչ կարելի է որ երբ ժողովոյ մը խնդիրը լոկ ընտանեկան կամ անձնական պատասխ ունենայ, չկարենանք միմիայն մեր շրջանին մէջ լուծել այդ խնդիրը. մինչ այդպիսի պարագայի մէջ այլ դաւանանքի պատկանող անձնաւորութիւն, երբ վերահասու կըլլայ խնդրոյն, կարող է պնդել նոյնիսկ սպառնական ձևով ներկայ մնալ։ բ) Եկեղեցւոյ մէջ հրաւիրեցի ծիսականներն և ոչ ծիսականները. յայտ է թէ ոչ-ծիսական ըսելով կը հասկցուին անոնք, որ հայ կաթոլիկ ըլլալով՝ Թիֆլիսի ծիսական չեն, այլ ժամանակաւոր կերպով կը գտնուին Թիֆլիսի մէջ։ Ոչ ծիսական ըսելով չեն լմացուիր այլ դաւանանքի պատկանող անձնաւորութիւններ, քանզի ասոնց համար ես չեմ կարող գործածել ծիսական բառը։ գ) Զձեզ բարեւելէն վերջ հարցուցի մեր առանձնական խօսակցութեանց մէջ, թէ արդեօք հայ կաթոլիկ եք թէ հայ-լուսաւորչական. երկու անգամ ես գործածեցի հայ բառը, թէ որ լաւ կը յիշէք. ուրեմն ազգի խարութիւն տեղի չունեցաւ, այլ դաւանանքի միայն։ Ուրեմն դուք որ օրէնքով, ինչ հիման վրայ կը խեղաթիւրէք բառերը, մին միւսի տեղ կը գործածէք կամ կը մերնէք։ դ) Մեր ժողովները ընդհանրական բնոյթ ունեցած է և յայտարարուած մասուլի միջոցաւ, նոյնիսկ իմ պաշտօնավարութեան ժամանակամիջոցին, ոչ միայն անարգել ներկայ գտնուած են հայ լուսաւորչականներ, այլ նոյնիսկ յայտնած իրենց գաղափարներ։ Ուրեմն այս անգամուայ զարտուղութիւնը ունէր իր առանձին պատճառը, զոր դիւրաւ կարող էիք ըմբռնել։ Intelligent satis.

Մկրտիչ վ. Արգարեան
Ժող. Հայ Կաթոլիկաց Թիֆլիսի

Խմբագիր-հրատարակիչ՝
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

Печатать дозволено военной цензурой.

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ
(Թիֆլիսի ժամերով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է՝

№ 3 դէպի Բաթում 1 ժ. 45 ր. ցերեկ.
№ 4 » Բաղու 7 ժ. 3 ր. երեկ.
№ 6 (արագ) » 12 ժ. 8 ր. ցերեկ.
№ 9 » Բաթում 8 ժ. 53 ր. երեկ.
» Զուլֆա 10 ժ. 23 ր. երեկ.
» Բօրժոմ 3 ժ. 20 ր. ցերեկ.

ԺԱՄԱՆՈՒՄ Է ԹԻՖԼԻՍ՝

№ 3 Բաղուից — 12 ժ. 54 ր. ցերեկ.
№ 4 Բաթումից — 5 ժ. 55 ր. երեկ.
№ 5 Բաղուից (արագ) 7 ժ. 41 ր. երեկ.
№ 10 Բաթումից — 9 ժ. 51 ր. առաւ.
Զուլֆայից — 6 ժ. 53 ր. առաւ.
Բօրժոմից — 7 ժ. 25 ր. առաւ.

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բժշկ. Բ. Նաւասարդեանի

Հիմնված 1880 թ.
(Կուկա, Զօրանցօվի արձանի հանդէպ)
Սմեն or, բացի կիրակի օրերից
«606»-ի եւ «914»-ի ներարկում բժշկական խորհրդակցութեամբ՝ առ. 11—12 ժ.

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան վենէրական (սիֆիլիս) հիւանդութիւն։
Բ. Դ. ԱԶԱՄԱՐԵԱՆ—9½—2 ժ. ներքին, ղոյլինե երիխայոց հիւանդութ. և ծանկահատ.։
Մ. Մ. ՌԵՆԻԱՄՕՎԻՉ—11—12 ժ. ականջի, կոկորդի քթի հիւանդութ.։
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. երեք. հինգշ. և շաբաթ. երիխայոց ներքին և հիւ. և ծաղկահատ.։
ԿԻՆ-Բ.ԺԻԶԿ ՏԷՐ-ԴԱՒԻԹԵԱՆ—12—1 ժ. մանկաբար ձուլիւն և կանանց հիւ.։

ԾԵՐԵԿՈՆԵՐԸ

Մ. Մ. ՌԵՆԻԱՄՕՎԻՉ—6—7 ժ.

Վճարը 50 կ.։ Շքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
1. 0—56

ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Ա. ՀԱԽՎԵՐԴԵԱՆ
նախկին օրդինատոր Պետերբուրգի սիֆիլ.-վեներ. կլինիկայի։ Ընդունում է հիւանդներին յատկապէս միզասեռային, վեներ., սիֆիլիսային հիւանդութեան. առաւ. ժամը 10—11 և երեկ. ժ. 6—8. Սեմեոնովսկայա փող., № 18 (Զօրանցօվի արձանի մօտ)։ Բժշկի բնակարանը Սեմեոնովսկայա, № 16.
(չ. տ. կ.) 1018. 100—52

ԲԱՑԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԼՈՒՅՍ ՏԵՍԱԻ ԵՒ ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
Գ. ՏԷՐ-ՊՈՒՌԻՆԵԱՆԻ
Հայաստանի տնտեսական հեռանկարները
գրքոյկը։
Գինն է 20 կոպէկ։
Ցիշեալ գրքոյկը ցանկացողները թող դիմեն «Մշակի» խմբագրութեանը, կանխապէս ուղարկելով գրքոյկի արժէքը և ճանապարհածախսի համար էլ 14 կ.։
(օ. մ.) 198. 5—4

„ԱՐՇԱԼՈՅՍԻ ԶԱՑՆԵՐ“
Նոր ազգային երգարան
Հայրենասիրական օտանաւորներով երկրորդ բարեփոխված տպագրութեամբ՝ ԱՆԴՐԱՆԻԿի և բոլոր խմբապետների և իրանց բանակների նկարներով։
Գինն է 40 կոպէկ։
Դիմել՝ Тифлисъ, Эриванская пл. Писчебумажный магазинъ. К. Г. АРЗУМАНЯНЦУ.
Նոյնպէս և բոլոր գրավաճառներին։
Գումարով գնողներին լինում է զեղչ։
(չ. տ. կ.) 141. 10—10

Նոր-Զուղայի ազգային դպրոցների համար ՀԱՐԿԱՒՈՐ ԵՆ
ԵՐԿՈՒ ՈՒՄՈՒՑԻՉ
աւարտած Ներսիսեան դպրոցը կամ Գէորգեան ճեմարանը։ Ուսուցիչներից մէկը վարելու է նաև տեսչի պաշտօն։ Ցանկացողները ստանձնել այդ պաշտօնները, պէտք է դիմեն «Մշակի» խմբագրատանը։
214. Հ. Առաքելեանին։ 2—1

ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՐԱՒ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ քարտէզ բազմազոյն և գեղարուեստօրէն կազմված հազուագիւտ հրատարակութիւն, տպված արտատամանում՝ Պրագայում, Univey ֆիրմայում, բրիստոլեան թանձրաթղթի վրա, որ գործադրվում է այցեքարտերի համար։ Ի նկատի առած ներկայ քաղաքական դէպքերը, թէ վերոյիշեալ նկարը և թէ քարտէզը կարող են ծառայել թէ որպէս տնային զարդարանք և թէ որպէս դասական ձեռնարկ դպրոցականների համար։ «Մայր Հայաստան» նկարը կարող է ծառայել նաև ձեռագործների, նկարումների և էջպկաների ընդօրինակման համար։ Նկարի և քարտէզի գինն է, ճանապարհածախքով և վերադիր վճարով—2 ր. 35 կ.։ Նկարն առանձին—1 ր. 50 կ., իսկ քարտէզը—30 կոպ.։
ճանապարհածախքը՝ պօստային սակագնով։
Պահանջներն ու դրամը հասցէագրել՝ Типографія «Культура». Тифлисъ, Михайловскій пр. 102—6. Հեռագրի հասցէն՝ Культура. Тифлисъ. Տէլէֆօն № 17—27.
(օ. մ.) 151. 10—10

Типографія Канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лоирсъ-Меликовская улица, домъ казенный.